

**ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԿԵՆՏՐՈՆԻ**

ՏԵՂԵԿԱԳԻՐ N4

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2013

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ Գիտական խորհրդի

2013թ. դեկտեմբերի 19-ին N 13-12/2 նիստի որոշման հիման վրա

Preprint 13-001

«Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի» գիտական հետազոտական լաբորատորիան սկսել է իր գործունեությունը 2010թ.-ից ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կազմում: Լաբորատորիան իրականացնում է ՀՀ գիտության և տեխնոլոգիաների զարգացման խնդիրների ուսումնասիրություն, ոլորտի մոնիթորինգ և վիճակագրական տեղեկատվության վերլուծություն:

Գիտական և գիտատեխնիկական փորձաքննություն

Է.Գ.Գրոյան, Ա. Ռ. Միրզոյան, Շ. Ա. Սարգսյան

Համառոտագիր

Տեղեկագրում ուսումնասիրվել է գիտական և գիտատեխնիկական փորձաքննության միջազգային փորձը: Բերվել են Առողջապահական հետազոտությունների կանադական ինստիտուտի, Կրթական գիտությունների ամերիկյան ինստիտուտի և «Հորիզոն 2020»-ի փորձաքննության իրականացման օրինակները:

Տեղեկագիրը ներկայացնում է նաև Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական փորձաքննության անկացման ընթացակարգերը, գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը: Մանրամասնվում են փորձաքննության անցկացման փուլերը՝ մրցույթների հայտարարումից մինչև փորձաքննության արդյունքների հրապարակումը (հայտերի ընդունում, տեխնիկական փորձաքննության անցկացում, մասնագիտական հանձնաժողովների ստեղծում, փորձագետների ընտրություն, հայտերի գնահատում և այլն):

Տեղեկագիրը անդրադառնում է նաև փորձագետներին ներկայացվող պահանջներին, բացատրում է գիտաչափական ցուցանիշներով հայտերի գնահատման մեխանիզմները:

Գիտական և գիտատեխնիկական փորձաքննություն

Գիտական փորձաքննությունը գիտական աշխատանքի գնահատումն է նմանատիպ իրավասություն ունեցող անձանց կողմից: Այն տվյալ բանագավառի բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից ինքնակառավարման միջոց է: Փորձաքննության մեթոդները կիրառվում են որակի չափանիշները պահպանելու, աշխատանքների իրականացումը բարելավելու և աշխատանքի հանդեպ վստահությունը երաշխավորելու համար:

Մեզ հասած առաջին գրանցված խմբագրական փորձաքննությունը վերաբերում է 1665թ-ին և կատարվել է Բրիտանական թագավորական միության (The Royal Society) «Փիլիսոփայական գործեր» ամսագրի հիմնադիր խմբագիր Հենրի Օլդենբուրգի կողմից¹: Արդեն 20 –րդ դարում գիտական փորձաքննությունը բավական լայն տարածում ստացավ նաև գիտության ֆինանսավորման բաշխման գործընթացում, որը զարգացավ խմբագրական փորձաքննությունից անկախ:

Ներկայումս գիտական հետազոտությունների համար ֆինանսական միջոցների տրամադրումը տեղի է ունենում հիմնականում գիտական փորձաքննության արդյունքում: Դրամաշնորհների փորձաքննությունը գիտական հետազոտության որակի վերահսկողության գլխավոր մեխանիզմն է, որի կիրառությունն աշխարհում շարունակում է աճել: Կազմակերպող և ֆինանսավորող կազմակերպությունների համար փորձագիտական

¹ Wendy Elizabeth Wagner, Rena Steinzor, *Rescuing Science from Politics: Regulation and the Distortion of Scientific Research*, Cambridge University Press, 2006, pp. 220-221.

քննությունը ապահովում է «պատկառելիության շղարշը»²: Ուստի մեծ ջանքեր են գործադրվում՝ հայտերը ստուգելու, ընտրելու և ֆինանսավորելու համար:

Սովորաբար, փորձաքննությունն իրականացվում է մի քանի փորձագետի ներգրավվածությամբ: Առաջին հերթին սա պայմանավորված է տեղեկատվության բազմազանության անհրաժեշտությամբ և կոչվում է տեղեկատվության համախմբման ֆունկցիա: Դրա էությունը հետևյալն է. այս կերպ ֆինանսավորման վերաբերյալ որոշումն ընդունվում է առավել լայն տեղեկատվության հիման վրա: Մյուս պատճառը համաձայնություն կառուցելու ֆունկցիան է. կոնսենսուսի արդյունքում կայացրած վճիռը ավելի մեծ հավանության կարժանանա գիտական համայնքի կողմից³:

Գոյություն ունի մի քանի փորձագետների ընդգրկմամբ դրամաշնորհների գիտական փորձաքննության երկու հիմնական ընթացակարգ՝ անհատական և խմբային: Անհատական փորձաքննության ժամանակ, գիտնական-փորձագետները տվյալ աշխատանքը գնահատում են իրարից անկախ, ինքնուրույն, իսկ հայտը մերժվում կամ ընդունվում է վերջնական որոշում կայացնող մարմնի կողմից: Իսկ խմբային փորձաքննության ժամանակ, փորձագետների խումբը հավաքվում և համատեղ քննարկում է հայտի գիտական որակը մինչև ֆինանսավորման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը: Որոշ դեպքերում հենց նույն խումբն էլ կայացնում է հայտի ֆինանսավորման վերաբերյալ որոշումը:

Գրախոսության հիմնական ձևերը

² Ethics: What is it for? Analysing the purpose of peer review. *Nature* (2006) | doi:10.1038/nature04990

³ Meike Olbrecht and Lutz Bornmann, Panel Peer review of grant applications: what do we know from research in social psychology on judgment and decision-making in groups, *Research Evaluation*, 19 (4), October 2010, pp. 293-304.

Այսօր գիտական աշխարհում ընդունված են գրախոսության հետևյալ ձևերը. անանուն փորձաքննություն (Single blind review); կրկնակի անանուն փորձաքննություն (double blind review) և բաց գրախոսություն (open review):

Անանուն փորձաքննություն: Սա գրախոսության ամենտարածված ձևն է: Գրախոսների անունները գաղտնի են պահվում հեղինակից, ինչը թույլ է տալիս գրախոսին կայացնել անկողմնակալ որոշում՝ հեղինակի ազդեցությունից անկախ: Սակայն հեղինակները մտավախություն են ունենում, որ եթե գրախոսը աշխատում է միևնույն բնագավառում, կարող է տեղի ունենալ գրագողություն: Միաժամանակ, գրախոսները, օգտագործելով իրենց անանունությունը, կարող են լինել շատ քննադատական և կոշտ հեղինակի աշխատանքի նկատմամբ:

Կրկնակի անանուն փորձաքննություն: Այս դեպքում ինչպես գրախոսը, այնպես էլ հեղինակը մնում են անհայտ: Սա թույլ է տալիս խուսափել գրախոսի կանխակալությունից՝ կապված հեղինակի երկրի կամ նախորդ հակասական աշխատանքի հետ: Հայտնի հեղինակների աշխատանքները գնահատվում են իրենց բովանդակության, այլ ոչ թե հեղինակի անվան կամ դիրքի հիման վրա: Սակայն, ամեն դեպքում կասկածելի է գրախոսության լիակատար անանունությունը, հատկապես գիտության նեղ ճյուղերում: Գրախոսները շատ հաճախ կարողանում են ճանաչել հեղինակին՝ աշխատանքի ոճից, բովանդակությունից, կամ ինքնահղումներից:

Բաց գրախոսություն, երբ հեղինակն ու գրախոսը հայտնի են միմյանց: Որոշ գիտնականներ կարծում են, որ սա չարամիտ մեկնաբանությունների, գրագողության վերջը կլինի և կքաջալերի գրախոսներին կատարել բաց, ազնիվ գրախոսություն: Մյուսները պնդում են հակառակը. քաղաքավարությունը կամ վախը կարող են ստիպել գրախոսին մեղմել քննադատական տոնը: Այսպես օրինակ, կրտսեր գրախոսները կարող են տատանվել ավելի ավագ և

հայտնի գիտնականներին քննադատելիս: Անկախ ուսումնասիրությունները հավաստում են այս մոտեցումը:

Բաց գրախոսության բացասական հետևանքներից նշվում է հնարավոր «թշնամիների» թվի աճը: Եվ դա տեղի է ունենում՝ անկախ գրախոսության արդյունքից: Օրինակ, հեղինակներից մեկն իր խիստ դժգոհությունն էր արտահայտել գրախոսից, չնայած, որ վերջինիս օժանդակությամբ հոդվածը հրատարակվել էր, քանի որ 10 էջ քննադատության մեջ մի սխալ էր գտել: Սակայն անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ հեղինակները պետք է իրենց կողմից խորապես ուսումնասիրված նյութից շատ ավելի լավ տեղյակ լինեն, քան գրախոսները:

Մյուս կողմից, անանուն գրախոսությունը ոչ միշտ է լուծում վերը նշված խնդիրը, եթե հոդվածը մերժվում է: Նեղ ոլորտներում իրական մասնագետների թիվը սահմանափակ է և հնարավոր է կռահել՝ ով է գրել գրախոսականը: Եվ հեղինակները միշտ փորձում են կռահել իրենց աշխատանքի գրախոսին:

Սակայն բաց գրախոսությունն ունի նաև առավելություններ: Նախ, գրախոսները առավել հարգալից և կառուցողական կլինեն: Երկրորդ, որևէ հոդվածի հրապարակում ձախողելու նպատակ ունեցող գրախոսողներին ավելի հեշտ կլինի ջրի երես հանել: Մինչդեռ անանուն գրախոսության պարագայում գրախոսողներն ավելի լայն հնարավորություն ունեն՝ առանց հետևանքների այս կամ այն հոդվածը մերժելու: Երրորդ, ամբողջովին բաց գրախոսության համակարգը, երբ գրոխոսողի անունը նշվում է հոդվածի տողատակում, կնպաստի, որպեսզի գրախոսողներն ավելի պարտաճանաչ և մանրակրկիտ մոտենան իրենց գործին⁴:

Ներկա փորձագիտական համակարգն ունի երեք ընդգծված ուղղվածություն.

⁴ Perspective: The pros and cons of open peer review. Should authors be told who their reviewers are? *Nature* (2006) | doi:10.1038/nature04991

1. փորձագետների կարծիքի միջոցով գիտական աշխատանքների որակի երաշխավորում,
2. ֆինանսավորման սահմանափակ տեղերի համար մրցակցության կառավարում,
3. գիտական աշխատանք՝ ուղղված գիտելիքի զարգացմանը⁵:

Ըստ որոշ գնահատականների, փորձաքննությունը ժողովրդավարության պես մի բան է. չնայած իր վատ կողմերի եղածներից ամենալավն է⁶:

Առկա թերություններով հանդերձ, ներկայիս փորձաքննության համակարգը լավագույնն է: Այն հնարավոր է որակել որպես «Գիտնականների գնահատականը այլ գիտնականների կողմից՝ արված հանրության համար»⁷:

Եվրոպական Գիտության հիմնադրամի վերջին հետազոտություններն ուսումնասիրել են դրամաշնորհների փորձաքննության իրականացումը տարբեր երկրներում և ինստիտուտներում⁸: Հիմնական եզրակացությունն այն էր, որ գործնականում դրամաշնորհների փաթեթները գնահատվում են ներքին և արտաքին փորձագետների կողմից, և վերջում քննարկվում են փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների կողմից: Ֆինանսավորման վերաբերյալ որոշումը կայացվում է գրախոսների գնահատականների և հանձնաժողովի որոշման հիման վրա⁹:

Աշխարհում հայտնի է նաև փորձագիտական իստիտուտի գաղափարը (այն հաջողությամբ գործում է, օրինակ, ԱՄՆ-ում), որը յուրահատուկ միջանկյալ օղակ է անհատ փորձագետների և Խորհուրդի միջև:

⁵ Quality and value: Models of quality control for scientific research, *Nature* (2006) | doi:10.1038/nature05031, <http://www.nature.com/nature/peerreview/debate/nature05031.html>

⁶ Improving the peer-review process relies on understanding its context and culture. *Nature* (2006) | doi:10.1038/nature05006

⁷ Perspective: Does peer review mean the same to the public as it does to scientists? Even reviewed literature can be cherry-picked to support any argument. *Nature* (2006) | doi:10.1038/nature05009

⁸ European Science Foundation (2011) ESF Survey Analysis Report on Peer Review Practices. European Science Foundation. 144 p. Available: <http://www.esf.org/activities/mo-fora/peer-review.html>. Accessed 2013 Nov. 20.

⁹ Hendy Abdoul, Christophe Perrey, Philippe Amiel, Florence Tubach, Serge Gottot, Isabelle Durand-Zaleski, Corinne Alberti, Peer Review of Grant Applications: Criteria Used and Qualitative Study of Reviewer Practices, at <http://www.plosone.org/article/info:doi/10.1371/journal.pone.0046054>

Փորձագիտական ինստիտուտը պետական փորձագետների միավորում է, որոնք իրականացնում են արբիտրի, միջնորդի և կազմակերպչի գործառույթներ: Պետական փորձագետներն ընտրվում են հայտնի գիտնականների թվից որոշակի ժամանակահատվածով: Ընդ որում, պետական փորձագետ լինելու ժամանակ նրանք պարտավորվում են չզբաղվել գիտական գործունեությամբ՝ հնարավոր շահերի բախումները բացառելու համար: Իհարկե, նման փորձագիտական ինստիտուտի հիմնումը հնարավոր է, եթե առկա է մեծ գիտական հանրույթ: Եթե իրականացվի փորձագիտական հանրությանը միավորելու ԵՄ նախաձեռնությունը, ապա հնարավոր կլինի ստեղծել նման մի կառույց, որտեղ իր մասնակցությունը կունենա նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս կառույցները նպաստում են գիտական հանրույթի ինքնակառավարման մակարդակի բարձրացմանը, երբ գիտությանը տրամադրվող ֆինանսական միջոցները կառավարվում են հիմնականում գիտնականների կողմից:

Գիտական փորձաքննությունը ԱՄՆ Կրթական գիտությունների ինստիտուտում

Համաձայն ԱՄՆ 2002 թ-ի Կրթական գիտությունների բարեփոխումների ակտի (Education Sciences Act), բոլոր այն ինստիտուտները, որոնց գործունեությունը իրականացվում է պայմանագրերի, դրամաշնորհների և համագործակցությունների միջոցով, պետք է գնահատվեն մրցութային կարգով՝ փորձաքննության միջոցով: Ստանդարտների և փորձաքննության գրասենյակը (Standards and Review Office)¹⁰ պատասխանատու է դրամաշնորհային հայտերի գիտական փորձաքննության համար: Որպես փորձաքննության համակարգի հիմնաքար մատնանշվում է փորձաքննություն

¹⁰ Ստանդարտների և փորձաքննության գրասենյակը Կրթության գիտությունների ինստիտուտի մարմին է:

անցկացնողների և կազմակերպիչների միջև հստակ սահմանազատումը:

2002թ-ին ինստիտուտը ստեղծեց փորձաքննության նոր համակարգ, որը շատ նման էր ԱՄՆ Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից իրականացվող փորձաքննությանը: Ստանդարտների և փորձաքննության գրասենյակը ընտրում է տվյալ բնագավառում խորը գիտելիքներ և համապատասխան մեթոդաբանությանը ծանոթ բարձր որակավորում ունեցող փորձագետների՝ նրանց գիտական հրատարակությունների հիման վրա:

2003 թ-ին ինստիտուտը ստեղծեց հայտերի հանձնման և փորձաքննության իրականացման էլեկտրոնային համակարգ, որով գիտական հայտերը հանձնվում են առցանց, փորձագետներն իրենց հայտերը նույնպես ստանում և գնահատում են առցանց, կարող են հետևել մյուս փորձագետների կարծիքներին (միայն իրենց գնահատականները համակարգ ներմուծելուց հետո), իսկ ինստիտուտի անձնակազմը կարողանում է հեշտությամբ հետևել փորձաքննության ընթացքին: Համակարգն արագացնում է վերջնական գնահատականների հաշվումն ու հայտատուների վերջնական պատասխանները:

Հայտերի հանձնումը փորձագետների խմբերին

Հայտերը փորձագետների խմբերին հանձնվում են համաձայն յուրաքանչյուր խմբի փորձագետների ընդհանուր փորձառության և յուրաքանչյուր հայտադիմումի բովանդակության և առաջարկված մեթոդաբանության:

Փորձագետների խմբից փորձագետների ընտրությունը. շահերի բախում

Շահերի բախման նախնական որոշում: Մինչև հայտադիմումների հանձնումը, մրցույթը հայտարարած հաստատության անձնակազմը ուսումնասիրում է յուրաքանչյուր հայտադիմում՝ շահերի հնարավոր բախումները հայտնաբերելու համար: Ուսումնասիրվում է հայտի ղեկավարի, գլխավոր անձանց, խորհրդականների, խորհրդակցական մարմնի անդամների հնարավոր շահերի բախումը փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամի, ինչպես նաև հայտատուի հաստատության և փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամի կազմակերպության միջև: Միաժամանակ ուշադրություն է դարձվում հայտի մասնակիցների և փորձագիտական խմբի անդամների միջև որևէ ակնհայտ գիտական համագործակցության առկայությանը:

Այնուհետև հայտերը հանձնվում են փորձագետներին՝ ելնելով վերջիններիս ընդհանուր մասնագիտական փորձառությունից և յուրաքանչյուր հայտի բովանդակությունից և առաջարկված մեթոդաբանությունից: Ընդ որում, պահպանվում է յուրաքանչյուր փորձագետի համար հայտերի գրեթե հավասար քանակը:

Յուրաքանչյուր հայտ, որպես կանոն, հանձնվում է առնվազն երկու փորձագետի:

Փորձագիտական խմբերի կազմությունը և վերջիններիս անդամների գործառույթները

Փորձագիտական խմբերը հիմնականում բաղկացած են լինում խմբի նախագահից, գիտական փորձաքննության համակարգողից և անդամներից: Փորձագիտական խմբերի նախագահները նշանակվում են խմբի անդամներից կազմակերպության գիտության գծով փոխտնօրենի կողմից: Գիտական

փորձաքննության համակարգողը ևս խմբի անդամ է, որը, սակայն, չունի քվեարկելու իրավունք: Նա քաջատեղյակ է գիտական փորձաքննության բոլոր կանոններին և ձևերին: Համակարգողը նախագահի հետ կազմակերպում է փորձաքննության խմբի հանդիպումներն ու ապահովում հայտերի արդար փորձաքննությունը:

Փորձագիտական խմբի անդամների ընտրությունը

Ինստիտուտն առանձնացնում է բարձր վարկանիշ և գիտական հեղինակություն ունեցող փորձագետների թեկնածուներ, որոնք ունեն բավական մասնագիտական փորձ և հմտություններ՝ դրամաշնորհի չափանիշներին համապատասխան փորձաքննություն իրականացնելու համար: Փորձագետների հավանական թեկնածուներն ընտրվում են իրենց գիտական ձեռքբերումների, գրախոսվող ամսագրերում նրանց ունեցած հրապարակումների և տվյալ բնագավառում նրանց փորձի հիման վրա: Ինստիտուտն օգտագործում է գրախոսների երեք տեսակ՝ գիտական խմբի գլխավոր անդամներ, ռոտացիայի միջոցով փոփոխվող անդամներ և ad hoc անդամներ:

Փորձագիտական խմբի գլխավոր անդամը ծառայում է 1-3 տարի կամ մինչև տվյալ դրամաշնորհային ուղղության դադարեցումը: Միայն մշտական խմբերն ունեն գլխավոր անդամներ: Փորձագիտական խմբի նախագահը ուսումնասիրում և հավանություն է տալիս խմբի գլխավոր անդամների նշանակմանը:

Ռոտացիայի միջոցով փոփոխվող անդամները նշանակվում են և հանդիսանում լիակատար անդամներ՝ ստանալով հայտերի ամբողջական փաթեթներ, մասնակցելով խմբի հանդիպումներին, գնահատելով տվյալ

փորձագիտական խմբի կողմից գրախոսվող բոլոր հայտերը, բացառությամբ նրանց, որոնց հետ առկա են շահերի բախումներ:

Փորձագիտական խմբի ad hoc անդամները նշանակվում են հատուկ փորձագիտական խմբում (մշտական կամ մեկ նստաշրջանի փորձագիտական խումբ) մեկ փորձաքննության համար և սովորաբար նրանց հանձնարարվում է 2-4 հայտ: Նրանք մասնակցում են փորձագիտական խմբի միայն այն նիստերին, որտեղ քննարկվում են իրենց գրախոսությանը հանձնված հայտերը, և չեն մասնակցում այն հայտերի քննարկմանն ու գնահատմանը, որոնց գրախոսությանն իրենք չեն մասնակցել: Նրանց մասնակցությունը սովորաբար տեղի է ունենում տեսաժողովների միջոցով:

Փորձագիտական խմբերի տեսակները

Ինստիտուտն ունի փորձագիտական խմբի երկու տեսակ՝ մշտական և մեկ նստաշրջանի: Մշտական փորձագիտական խմբերի անդամները նշանակվում են մի քանի հաջորդական նստաշրջանների համար և նրանց թիվը սահմանափակվում է 15-ից 20 անդամով, որոնցից ամենաքիչը 50%-ը գլխավոր անդամներ են, մյուսները նշանակվում են ռոտացիայով և ունենում են 3-4 ad hoc անդամներ:

Մեկ նստաշրջանի փորձագիտական խմբերը նշանակվում են մեկ գրախոսական հանդիպման համար և կարող են բաղկացած լինել ռոտացիայով նշանակվող կամ ad hoc անդամներից:

Շահերի բախում

Ինստիտուտը հաշվի է առնում շահերի բախման երեք տեսակ՝ ֆինանսական շահեր, անձնական կամ մասնագիտական կապեր, մասնագիտական կապեր հայտատուի կազմակերպության հետ:

Անձնական ֆինանսական շահեր: Ինստիտուտը շահերի բախում է համարում, երբ գրախոսը կարող է ֆինանսական օգուտներ ստանալ գրախոսության արդյունքում: Տվյալ անձը չի կարող աշխատել փորձագիտական խմբում, եթե ինքը հայտի անդամ է՝ անկախ հայտում ունեցած դերից: Անձը չի կարող ծառայել տվյալ փորձագիտական խմբում, եթե նրա ամուսինը/կինը, երեխան, տան անդամը կամ այլ մոտ ազգական ֆինանսական շահույթ ունի փորձաքննության արդյունքից, ինչպես նաև ֆինանսական շահույթ ունի այն կազմակերպությունից, որի հայտը քննարկվում է: Խմբի մշտական անդամի համար սա նշանակում է, որ ինքը որպես փորձագետ չի կարող մասնակցել տվյալ նստաշրջանին:

Անձնական կամ մասնագիտական կապեր: Անձը չի կարող լինել փորձագետ և չպետք է մասնակցի այն անհատների հայտերի քննարկմանն ու գնահատմանը, որոնց հետ ունի անձնական կամ մասնագիտական կապեր (օրինակ՝ ընթացիկ համագործակցության ծրագրերի անդամներ, ուսանողներ, ում վերջերս դասավանդել է փորձագետը, պրոֆեսորներ, որոնք վերջերս դասավանդել են փորձագետին, ընկերներ): Որոշումներն ընդունվում են փորձագետի և հայտում նշված անձի միջև աշխատանքային հարաբերությունների վաղեմության, հաճախականության և կապի հիման վրա: Եթե մոտ անձնական կապերը կարող են հանգեցնել հնարավոր անձնական ֆինանսական շահի, ապա տվյալ անձը չի կարող հանդես գալ որպես փորձագետ տվյալ աշխատանքի համար:

Փորձագետները չեն կարող լինել անմիջական գրախոսներ կամ մասնակցեն տվյալ աշխատանքի քննարկմանն ու գնահատմանը, եթե տվյալ

հայտի անդամների հետ ունեն մասնագիտական տարբերություններ, որոնք կարող են ազդել իրենց փորձագիտության անկողմնակալության վրա:

Մասնագիտական կապեր հայտատուի կազմակերպության հետ:
Գրախոսները չեն մասնակցում այն աշխատանքների փորձաքննությանը կամ քննարկմանն ու գնահատմանը, որոնք ներկայացված են իրենց աշխատանքի վայր հանդիսացող կազմակերպությունից:

Փորձագետները նախապես տեղեկացվում են փորձաքննության չափանիշների մասին, ինչպես նաև լրացնում և ստորագրում են շահերի բախման վերաբերյալ փաստաթուղթը:

Հայտերի հանձնումը փորձագետներին

Փորձագիտական խմբի հանդիպումից 6-7 շաբաթ առաջ յուրաքանչյուր փորձագետ ստանում է հայտերի իր փաթեթը: Եթե հայտերից որևէ մեկը ներկայացվել է կրկին, ապա հայտի հետ ուղարկվում է նաև նախորդ փորձագիտության արդյունքները:

Փորձաքննության չափանիշները

Փորձաքննության չափանիշները ներկայացված են յուրաքանչյուր հայտարարված մրցույթում: Չափանիշները հիմնականում նույն են, որոշ բացառություններով (օրինակ դրամաշնորհներ թրեյնինգների, հետազոտական կենտրոնների ստեղծման համար): Փորձագետները գնահատում են հայտի հետևյալ կողմերը. աշխատանքի կարևորությունը, հետազոտական պլանը, մասնակիցների որակավորումը, տեխնիկական ապահովվածությունը:

Նյութի կարևորությունը. Այս հարցադրման ներքո փորձագետը գնահատում է, թե արդյո՞ք տվյալ աշխատանքը կնպաստի առաջադրված հարցերի լուծմանը:

Հետազոտական պլանը. Այս չափանիշի հիմնականն այն է, թե արդյո՞ք հետազոտական պլանն ի վիճակի է դարձնում աշխատանքի իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

Անձնակազմ. Արդյո՞ք հայտի մասնակիցները՝ գլխավոր ուսումնասիրողը, ծրագրի տնօրենը, մյուս անդամները, այլ անձինք ունեն համապատասխան փորձ և պատրաստվածություն և ի վիճակի են բավարար ժամանակ տրամադրել՝ դրամաշնորհի իրականացման համար:

Տեխնիկական ապահովվածություն. Արդյո՞ք հայտատուն ունի անհրաժեշտ սարքավորումներ, նյութեր և այլ ռեսուրսներ՝ ծրագիրն իրագործելու համար:

Հայտերի փորձաքննությունը հիմնական/գլխավոր փորձագետների/գրախոսների կողմից

Սովորաբար, փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ ստանում է մոտ 8 հայտ: Գլխավոր փորձագետները նախապատրաստում են հայտի գրավոր կարծիքը՝ նշելով յուրաքանչյուր հայտի ուժեղ և թույլ կողմերը: Փորձաքննության արդյունքները հանձնվում են էլեկտրոնային փորձագիտական համակարգի միջոցով: Հիմնական փորձագետները գնահատում են հայտը ըստ առաջադրված չափանիշների (աշխատանքի կարևորությունը, հետազոտական պլանը, մասնակիցների որակավորումը, տեխնիկական ապահովվածությունը) և վերջում դնում հայտի ընդհանուր գնահատական: Փորձագետներին խնդրվում է յուրաքանչյուր աշխատանք գնահատել՝ այն համեմատելով անթերի աշխատանքի հետ, այլ ոչ թե մրցույթին ներկայացված մյուս հայտերի հետ:

Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է 1 (շատ թույլ)-7 (գերազանց) սանդղակով:

Յուրաքանչյուր փորձագետ աշխատանքին տալիս է նաև ընդհանուր գնահատական՝ 1.0 (գերազանց) մինչև 5.0 (թույլ):

Ընդհանուր գնահատականը չափանիշների գնահատականների միջինը չէ և ոչ էլ մաթեմատիկական գումարը: Յուրաքանչյուր գիտական փորձագետից պահանջվում է խորապես ուսումնասիրել հայտի յուրաքանչյուր մաս և որոշում կայացնել հայտի ընդհանուր որակի վերաբերյալ:

Առողջապահական հետազոտությունների կանադական ինստիտուտ (ԱՀԿԻ). Փորձագիտական քննության սկզբունքները

Առողջապահական հետազոտությունների կանադական ինստիտուտի փորձաքննության հիմնական սկզբունքներից է գաղտնիությունը: Դիմողների կողմից հայտերում ներկայացված տեղեկատվությունը պաշտպանված է Գաղտնիության մասին օրենքով և տրամադրվում է արտաքին գնահատողներին միայն գրախոսման նպատակով: Այսպիսով, հայտերում պարոդնակվող տեղեկությունները, գրախոսողի զեկույցները, գրախոսողների անունները և հանձնաժողովի քննարկումները խիստ գաղտնի են: Օրենքով դիմողներին հասանելի են իրենց սեփական հայտի փաթեթները: Ուստի հայտի գնահատման ժամանակ օգտագործվող բոլոր գրավոր նյութերը հասանելի են դառնում դիմողների համար, երբ նրանք տեղեկացվում են ԱՀԿԻ-ի որոշման մասին: Թեև գրախոսողների ինքնությունը ոչ մի պարագայում չի բացահայտվում դիմողներին, սակայն փորձագիտական հանձնաժողովի անդամների ցուցակը հրապարակվում է ԱՀԿԻ-ի կայքում՝ գիտական խորհրդի կողմից ֆինանսավորման հաստատումից 60 օր հետո:

Շահերի բախում

Համաձայն շահերի բախման քաղաքականության, այլ հավասար պայմաններում իրավասու հանդիսացող գրախոսողը կարող է դիտարկվել փորձագիտական հանձնաժողովի անդամության համար, եթե նա.

1. տվյալ փորձաքննության համար չկա շահերի հնարավոր բախում և ԱՀԿԻ-ի կողմից չի հայտարարվել որպես մրցույթի նկատմամբ նյութական շահերի բախման մեջ գտնվող անձ,
2. չունի մրցույթի ֆինանսավորման որոշման լիազորություն,
3. չի հանդիսանում քննվելիք հայտի հիմնական դիմող:

Հանձնաժողովի անդամը համարվում է հայտի հետ շահերի բախում ունեցող, եթե նա.

- Նույն բաժնից, ինստիտուտից, կազմակերպությունից կամ ընկերությունից է, ինչ որ դիմողը և փոխգործակցում է նրա հետ իր պարտականությունները կատարելիս,
- Վերջին հինգ տարվա ընթացքում համագործակցել է դիմողի հետ, ունեն համահեղինակությամբ աշխատանքներ,
- Վերջին տաս տարիների ընթացքում հանդիսացել է դիմողի ուսանողը կամ ղեկավարը,
- Դիմողի մտերիմ ընկերը կամ բարեկամն է,
- Գտնվում է երկարատև գիտական կամ անձական հակասությունների մեջ դիմողի հետ,
- Կարող է ֆինանսապես շահել կամ տուժել հայտի արդյունքներից, կամ
- Այլ պատճառներից ելցնլով զգում է, որ չի կարող անկողմնակալ գրախոսություն ներկայացնել հայտի վերաբերյալ:

Հանձնաժողովի բոլոր անդամները /նախագահը, գիտական աշխատողը, փորձագետները և այլք/ նույնպես ենթարկվում են շահերի բախման սույն ուղեցույցին: Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են իրենց համաձայնությունը տալ շահերի բախման և գաղտնիության քաղաքականությանը՝ նախքան որևէ հայտի տվյալների հետ առնչվելը :

Գիտելիքի փոխանցում

ԱՀԿԻ-ի առաքելության բաղկացուցիչ մաս է գիտելիքի փոխանցումը, ինչը պահանջում է հետազոտողներից տարածել իրենց հայտնագործությունները: Որպես դրամաշնորհի արդյունք հանդիսացող գիտելիքի փոխանցման պարագայում գոյություն ունեն դրա տարածման բազում ձևեր և հետազոտողի պարտականությունն է՝ ընտրելու ամենահամապատասխան միջոցը՝ գիտելիքի կիրառման թիրախային լսարանի վրա առավելագույն ազդեցություն ունենալու համար: Երբ գիտելիքի առաջնային օգտագործողները հետազոտողներն են, արդյունքներն հիմնականում տարածվում են բարձր ազդեցություն ունեցող գիտական ամսագրերում հրատարակությունների միջոցով, չնայած այլ ռազմավարությունները, որոնք բարձրացնում են արդյունքների մասին իրազեկությունը և հեշտացնում դրանց օգտագործումը, նույնպես կարող են ընդունելի լինել: Երբ գիտելիքն օգտագործող հանրությունը պետք է տեղեկացվի հետզոտության յուրահատուկ արդյունքների մասին, ակնկալվում են ավելի հավակնոտ և համապարփակ ռազմավարություններով գիտելիքի տարածման ծրագրեր: Համակարգային գիտելիքի ստեղծման ժամանակ համատերերը կամ հետազոտության արդյունքների հավանական օգտագործողները ներգրավված են ողջ հետազոտական գործընթացի մեջ, իսկ տվյալ հետազոտությունն ուղղված է համատերերի/գիտելիքի

օգտագործողների կողմից սահմանված հարցերի կամ խնդիրների համար լուծումներ առաջարկելուն (կարևորվում է գիտություն-արտադրություն կապը):

Հրատարակությունները և դիմողների գիտական արդյունավետությունը

Բոլոր դրամաշնորհային ծրագրերում գնահատման կարևոր չափորոշիչ է դիմողի գերազանցությունը: Այս չափորոշիչը գնահատելու որոշիչ գործոն է դիմողի գիտական արդյունավետությունը, որը որոշվում է ոլորտում ունեցած ներդրումների քանակով և ազդեցությամբ: Հրատարակությունների որակը գնահատելիս, փորձագիտական հանձնաժողովը ուշադրություն է դարձնում հրատարակությունների բովանդակության որակի, այլ ոչ թե պարզապես հրատարակությունների քանակի կամ էլ ամսագրերի որակի և ազդեցության գործակիցների վրա: Բազմահեղինակ հրատարակությունների կամ այլ համագործակցային աշխատանքի պարագայում դիմողներին խորհուրդ է տրվում ներկայացնել իրենց ներդրումն իրականացված աշխատանքում, իսկ փորձագետներն արդեն պետք է գնահատեն դիմողի հստակ ներդրումը աշխատանքի մեջ:

Քանի որ ԱՀԿԻ-ը ֆինասավորում է առողջությանը վերաբերող տարաբնույթ ոլորտները և հետազոտական հրատարակությունները կարող են մեծապես տաբերվել կախված ոլորտից, ապա փորձագետները հաշվի են առնում նաև դիմորդի այլ գիտական ներդրումները՝ գրքեր, մենագրություններ, հուշեր կամ հատուկ աշխատություններ, հոդված-ակնարկներ, գիտաժողովների/սիմպոզիումների նյութերի (abstracts կամ postres) և այլն: Որոշ արագ զարգացող ոլորտներում, ինչպես օրինակ համակարգչային գիտությունները, գենետիկան, կամ միկրոէլեկտրոնիկան, կիրառում են հատուկ միջոցներ՝ թիրախային լսարանին արագ հասնելու համար: Ուստի

փորձաքննություն իրականացնողները պետք է նաև հաշվի առնեն նման ներդրումները:

Փորձաքննության իրականացում

Դրամաշնորհների փորձագիտական հանձնաժողովի անդամները

ԱՀԿԻ-ի փորձաքննական հանձնաժողովը սովորաբար բաղկացած է նախագահից, գիտաշխատողից, փորձագետներից, ԱՀԿԻ-ի անձնակազմից և հատուկ ներկայացուցիչներից՝ կախված դրամաշնորհի ձևից: Հանձնաժողովի առանձին անդամներն ընտրվում են ըստ իրենց գիտական ձեռքբերումների: ԱՀԿԻ-ի դրամաշնորհային մրցույթները անցկացվում են ինչպես պարբերական, այնպես էլ արտահերթ սկզբունքով: Պարբերական մրցույթների համար ձևավորվում են մշտական փորձագիտական հանձնաժողովներ, որոնց անդամներն ընտրվում են ֆիքսված ժամանակահատվածով (սովորաբար երեք տարի)՝ փորձագիտական գործընթացի հետևողականությունն ու շարունակականությունն ապահովելու համար: Հատուկ դեպքերում մշտական հանձնաժողովի կազմը կարող է լրացվել հավելյալ մասնագետներով՝ ելնելով մրցույթին ներկայացված այս կամ այն հայտի առանձնահատկությունից: Արտահերթ մրցույթների համար ստեղծված հանձնաժողովներն մրցույթների ավարտից հետո կազմալուծվում են:

Դրամաշնորհային հայտի փորձաքննության գործընթացը. Գործընթացի սկիզբը

Մրցույթին ներկայացված հայտերը նախ անցնում են համապատասխանելիության որոշման գործընթացը, երբ գնահատվում է հայտի համապատասխանելիությունը դրամաշնորհի մեջ նշված հետազոտության թեմային: Վերջնաժամկետից հետո երկու շաբաթվա

ընթացքում նախագահը և գիտաշխատողները ԱՀԿԻ-ի աշխատակազմի հետ միասին քննում են իրենց հանձնաժողով ուղարկված հայտերը: Նրանք պատասխանատու են երաշխավորելու, որ իրենց հանձնաժողովը համալրված է համապատասխան մասնագետներով և որ հայտն ընդունելուց հետո նրանք կիրականացնեն արդար փորձաքննություն: Երբ հայտերը չեն համապատասխանում տվյալ հանձնաժողովի իրավասությանը, դրանք ուղարկվում են այլ հանձնաժողով: Հանձնաժողովի առավելագույն ծանրաբեռնվածությունը եռօրյա նստաշրջանի համար չպետք է գերազանցի 60 հայտը: Հայտերը փորձագիտական հանձնաժողովներ ուղարկելու հարցում վերջնական որոշումը պատկանում է ԱՀԿԻ-ն:

Հաստատվելուց հետո հայտերի ցուցակները հասանելի են դառնում հանձնաժողովի անդամներին՝ հայտերի հակիրճ նկարագրություններով: Սա արվում է, որպեսզի անդամները հայտնեն շահերի բախման մասին և նշեն տվյալ ոլորտում իրազեկության մակարդակը:

Այնուհետև հանձնաժողովի հախագահը, գիտական աշխատողները և ԱՀԿԻ-ի անձնակազմը բաշխում են հայտերը հանձնաժողովի անդամների միջև (սովորաբար երկու ներքին փորձագետի և գրախոսի¹¹): Անհրաժեշտության դեպքում հայցվում են նաև արտաքին գրախոսություններ: Այնուհետև փորձագիտական հանձնաժողովի նիստից 4-6 շաբաթ առաջ բոլոր անդամները, բացառությամբ արտաքին փորձագետների, ստանում են ամբողջական հասանելիություն իրենց հանձնաժողով ուղարկված բոլոր

¹¹ Յուրաքանչյուր հայտ ենթարկվում է երկու փորձագետի՝ գիտելիք օգտագործողի և հետզոտողի, և մի գրախոսի քննության: Փորձագետները կենտրոնանում են հայտի հավանական ազդեցության և գիտական արժեքի գնահատման վրա: Գրախոսը հանդես է գալիս որպես քննարկման մասնակից և պարտավոր չէ ներկայացնել գրավոր ակնարկ: Համայնքի միջոցներով իրականացվող հետազոտական ծրագրի պարագայում յուրաքանչյուր հայտ ենթարկվում է երկու փորձագետի և երկու գրախոսի քննության:

հայտերին: Արտաքին փորձագետների համար հասանելի են լինում միայն իրենց բաժին հասած հայտերը: Հանձանժողովի անդամներն իրավունք ունեն մինչև փորձագիտական հանձանժողովի նիստը ծանոթանալ արտաքին փորձագետների զեկույցներին, երբ դրանք հասանելի են դառնում:

Հայտերի փորձաքննությունը

Բոլոր փորձագետների պարտականությունն է մինչև նիստը նախօրոք ծանոթանալ բոլոր հայտերի հետ, որոնք պետք է գնահատվեն իրենց հանձնաժողովի կողմից, ինչպես նաև, արտաքին փորձագետների զեկույցներին (եթե առկա են): Սա արվում է, որպեսզի ներքին փորձագետները նախապատրաստեն իրենց զեկույցները:

Նիստից մեկ շաբաթ առաջ ներքին փորձագետները պետք է անեն հետևյալը առցանց համակարգում (Research Net).

1. վերբեռնեն գրախոսությունները,
2. իրականացնեն յուրաքանչյուր հայտի նախնական գնահատումը
3. հնարավորության դեպքում իրականացնեն հայտերի բաժանում վերին և ներքին խմբերի՝ ելնելով նրանց ընդհանուր որակից: Վերին խմբում պետք է ներառվեն այն հայտերը, որոնք դիտարկվում են որպես մրցունակ և ֆինանսավորման արժանի:

Նիստի ընթացքը

Փորձագիտական հանձնաժողովը գնահատում է ներկայացված հայտերը և դասակարգում դրանք՝ կիրառելով ԱՀԿԻ-ի դասակարգման սանդղակը: Հնարավորության պարագայում հանձնաժողովն առաջարկում է նաև ներկայացվող հետազոտության համար բավարար բյուջե: Ընդ որում, հանձնաժողովի որևէ անդամ, ով հայտի հետ կապված ունի շահերի բախում,

չի մասնակցում հայտի քննարկմանը և լքում է սենյակը նախքան քննարկման սկիզբը:

Ֆինանսավորման համար ներկայացված հայտերի գնահատումը տեղի է ունենում երկու փուլով.

1. առնվազ երկու ներքին փորձագետ կատարում են հիմնարար գնահատում՝ ներկայացնելով գրավոր կարծիք և երկու գնահատական՝ մեկը հետազոտության հավանական ազդեցության, մյուսը՝ գիտական արժանիքի վերաբերյալ:

2. հայտերը քննարկվում և դասակարգվում են հանձնաժողովի նիստի ժամանակ:

Սրա արդյունքում ԱՀԿԻ-ը գեներացնում է նախապատվությունների ցուցակ՝ կայացնելու համար ֆինանսավորման հատկացման որոշումներ: ԱՀԿԻ-ն կարևորում է այն հանգամանքը, որ հանձնաժողովը կենտրոնանա ամենամրցունակ հայտերի վրա: Այս նպատակին հասնելու համար իրականացվում է օպտիմալացման գործընթաց՝ բացառելու համար անմրցունակ հայտերը, ինչը թույլ է տալիս փորձագետներին ավելի շատ ժամանակ տրամադրել մրցունական հայտերը գնահատելու և նրանց միջև ընտրություն անելու համար: ԱՀԿԻ-ն համոզված է, որ այն դիմողները, ում հայտերը ենթարկվել են օպտիմալացման (այսինքն՝ հետ են վերադարձվել) նույնպես շահում են, քանի որ ներքին փորձագետներից (առկայության դեպքում նաև արտաքին փորձագետից) ստանում են գրավոր կարծիք իրենց աշխատանքների մասին:

Հայտերը օպտիմալացվում են հատուկ ընթացակարգով: Յուրաքանչյուր հայտի գնահատումը փորձագիտական հանձնաժողովի նիստերին սկսվում է ներքին փորձագետների կողմից իրենց նախնական գնահատականի

հայտարարումից, որը պետք է լինի տասնորդականի ճշտությամբ: Դրանից հետո հայտն օպտիմալացվում է, եթե՝

1. եթե երկու փորձագետներն էլ հայտը տեղադրել են ստորին խմբում,
2. ներքին փորձագետների նախնական գնահատականների միջինը ցածր է 3.50-ից,
3. հանձնաժողովի այլ անդամները դեմ չեն, որ հայտը չքննարկվի:

Հայտի օպտիմալացման ժամանակ հանձնաժողովի անդամները չեն քվերակում և գնահատականը հաշվվում է ներքին փորձագետների նախնական գնահատականների միջինի հիման վրա:

Հայտերի գնահատումը

Եթե հայտը հետ չի վերադարձվում, ապա հանձնաժողովի նիստն ընթանում է հետևյալ ընթացակարգով.

- Առաջնային փորձագետը տալիս է իր գնահատականը՝ ներկայացնելով հայտի ուժեղ և թույլ կողմերը;
- Այնուհետև ելույթ է ունենում երկրորդ փորձագետը՝ կենտրոնանալով նախորդ փորձագետի գնահատականների այն կետերի վրա, որոնց հետ նա համակարծիք է կամ ոչ, և մանրամասն ներկայացնում է նախորդի կողմից չքննարկված կետերը;
- Եթե առկա են արտաքին գրախոսություններ, ապա հանձնաժողովի անդամներից մեկը կարդում է դրանք;
- Գրախոսը կարող է մեկնաբանել հնչեցված հարցերը կամ բարձրացնել հավելյալ հարցեր, եթե անհրաժեշտ է;
- Նախագահը նախաձեռնում է հայտի քննարկումը հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցությամբ;

- Գիտաշխատողը նշում է քննարկման առանցքային տարրերը, որոնք պետք է հաշվի առնել՝ հայտը գնահատելիս;
- Նախագահողը հայցում է համաձայնեցված գնահատական երկու ներքին փորձագետներից: Ներքին փորձագետները կարող են վերանայել իրենց նախնական գնահատականները: Եթե հնարավոր չի լինում գալ համաձայնության, նախագահն է հայտարարում համաձայնեցված գնահատականը՝ սովորաբար վերցնելով հնչած գնահատականների միջինը;
- Մենյակում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամները (ներառյալ հեռուստաժողովի անդամները և երկու ներքին փորձագետները) բացի նախագահից և գիտաշխատողից, անհատական գաղտնի քվեարկություն են իրականացնում համաձայնեցված գնահատականի ± 0.5 սահմանում: Երկու ներքին փորձագետները կաշկանդված չեն համաձայնեցված գնահատականով կամ իրենց նախնական գնահատականով: Հայտին տրվող գնահատականը հանդիսանում է գաղտնի քվեարկության արդյունքում ստացված գնահատականների միջինը: Քվեարկությունը հաշվի է առնվում, նույնիսկ եթե համաձայնեցված գնահատականը 3.5-ից ցածր է (այսինքն, գտնվում է ֆինասավորման գծից ցած):

Բյուջեի և դրա համապատասխանությունը հայտին նույնպես քննարկվում են և արվում առաջարկություններ: Բյուջեի քննարկում, սակայն, չի պահանջվում, եթե հայտը չի քննարկվում (օպտիմալացվել է) կամ եթե համաձայնեցված գնահատականը քննարկումից հետո 2.9-ից ցածր է: Բյուջեն որոշվում է, ըստ հետևյալ կետերի.

- դրամաշնորհի ժամկետը: Որոշ դեպքերում, երբ հայտերի իրականացումը հիմնված է տարեկան գործողության վրա, գումարները կարող են տարեց տարի տարբերվել,
- պրակտիկանտներ. ուսուցման գերեզանցություն և շրջապատ,
- սարքավորումների անհրաժեշտություն և այլն:

Բյուջեի վերաբերյալ հարցերը չպետք է ազդեն հայտի գնահատման վրա, քանի դեռ նրանք ուղղակիորեն չեն ազդում հայտի գիտական արժեքի վրա:

Ցանկացած հարց, որը վերաբերում է դիմողի և վերջինիս հաստատության համապատասխանությանը ԱՀԿԻ-ի ֆինանսավորում ստանալու չափորոշիչներին, բյուջեի ոչ բավարար հիմնավորվածությանը, բարոյականությանը և այլն, պետք է քննարկվի և անհրաժեշտության պարագայում նշվի նիստի ժամանակ՝ ԱՀԿԻ-ի անձնակազմի կողմից անդրադառնալու համար: Սակայն, այս հարցերը չպետք է դիտարկվեն որպես գնահատման չափորոշիչ, բացառությամբ, եթե դրանք կարող են ազդել հայտի գիտական որակի վրա:

Փորձագիտական հանձնաժողովի նիստի ավարտը

Երբ բոլոր հայտերը քննարկվել են, սակայն հանձնաժողովի մոտ տպավորություն կա, որ որևէ հայտ/եր/ը պատշաճ կերպով չի/չեն քննվել, ապա թույլատրվում է մեկ կամ փոքր թվով հայտերի վերաքննությունը: Հանձնաժողովի որևէ անդամ, ով շահերի բախում ունի, դարձյալ լքում է սենյակը: Հաջորդող քննարկումը, համաձայնեցված գնահատումը երկու ներքին փորձագետների կողմից և քվեարկման գործընթացը իրականացվում է նախկինի պես: Ամենավերջում հանձնաժողովը չի անդրադառնում բոլոր հայտերի ընդհանուր գնահատականներին, քանի որ շահերի բախում ունեցող

անձիք վերջում անխուսափելիորեն ներկա են գտնվելու: Ցանկացած փորձագիտական հանձնաժողովի նիստի կարևոր մասն է հանձնաժողովի արդյունավետության և գործունեության եզրափակիչ գնահատումը և քաղաքականության հարցերի քննարկումը, որոնք կարող են ծագել քննարկման արդյունքում: Այս քննարկումը հնարավորություն է տալիս ԱՀԿԻ-ի անձնակազմին անդրադառնալու հանձնաժողովի անդամների ցանկացած մտահոգությանը, իսկ անձնակազմին՝ գրառելու փորձագիտության գործընթացի վերաբերյալ ստացված արձագանքները՝ ապահովելու համար փորձագիտության համակարգի արդյունավետությունն ու բարձր որակը:

Փորձագիտական հանձնաժողովի նիստի ընթացքում հանձնաժողովը նշում է լուսաբանվելու արժանի, բարձր գնահատված և/կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հայտերը, որոնց մասին ԱՀԿԻ-ը տեղեկացնում է հասարակությանն ու իշխանություններին (նաև տեղեկություններ իր գործունեության վերաբերյալ):

Հայտերի ֆինանսավորումը

Փորձագիտական հանձնաժողովի նիստից հետո հնարավորինս շուտ ԱՀԿԻ-ի անձնակազմը ձևավորում է ֆինանսավորման տարբերակներ՝ հիմնված հանձնաժողովի առաջարկների վրա, որոնք քննվում են գլխավոր գիտաշխատողի և ֆինանսական տնօրենի կողմից: Նրանք դիտարկում են ֆինանսավորման առաջարկները գիտական խորհրդի կողմից հաստատված չափանիշների լույսի ներքո և ներկայացնում իրենց առաջարկները գիտական խորհուրդ՝ վերջնական հաստատման համար: Հաջողակ հայտերի ցուցակը զետեղվում է ֆինանսավորման վերաբերյալ որոշումների ծանուցման էջում:

Դիմողները տեղեկացվում են մրցույթի արդյունքների մասին հետևյալ կերպ.

1. Որոշ մրցույթների պարագայում նիստից հետո դիմողները ստանում են բոլոր գրախոսությունների և գիտաշխատողի նշումների պատճենները և տեղեկացվում են հանձնաժողովում հայտի գնահատման և դասակարգման մասին: Դա հնարավորություն է տալիս այն դիմողներին, որոնց հայտերը ամենայն հավանականությամբ չեն ֆինանսավորվի, սկսեն հայտի վերաներկայացման գործընթացը, եթե հնարավոր է, և գրանցվեն հետագա մրցույթների համար:
2. Երբ գիտական խորհուրդը հաստատում է դրամաշնորհների ֆինանսավորումը, բոլոր դիմողներին ուղարկվում են որոշման ծանուցումներ, որտեղ տեղեկացվում է՝ արդյոք նրանց առաջարկները հաստատվել են, թե՛ ոչ, և եթե այո, ապա ինչ բյուջեով (կարող է համընկնել կամ ոչ փորձագիտական հանձնաժողովի առաջարկության հետ): Որոշման ծանուցումը սովորաբար տարածվում է /ResearchNet կամ էլ.փոստի միջոցով/ գիտական խորհրդի նիստից հետո երեք շաբաթվա ընթացքում:

Դրամաշնորհների հայտերի գնահատումը. Հայտերի տեսակները

Մշտական մրցույթների համար հայտերը կարող են պարունակել նոր առաջարկներ կամ լինեն նախկինում ֆինանսավորված նախագծերի փոփոխված և թարմացված կամ մերժված հայտերի վերաներկայացված տարբերակներ: Այս բոլոր հայտերը գնահատվում են հավասար պայմաններում և նույն չափորոշիչներով: Միաժամանակ փորձագիտական հանձնաժողովի անդամներին հիշեցվում է, որ որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հայտատուի՝ նախորդ դրամաշնորհից հետո գրանցված առաջընթացը: Իսկ մրցույթին նորից ներկայացվող հայտերը պետք է ներառեն պատասխան (երկու էջի սահմաններում) նախորդ փորձաքննության ժամանակ արված գրախոսականներին: Ակնկալվում է, որ

այս պատասխանը, հետազոտության պլանում կատարված համապատասխան փոփոխությունների հետ մեկտեղ, պետք է բարելավի հայտի որակը: Ինչնիցէ, հանձնաժողովի անդամները չեն ստանում նախկինում արված գրախոսականների պատճենները և պետք է գնահատեն վերաներկայացված հայտը մրցույթին ներկայացված այլ հայտերի համեմատ:

Գնահատման չափանիշները

ԱՀԿԻ ներկայացված յուրաքանչյուր դրամաշնորհի գնահատվում է հստակ, ստորև բերվող հինգ չափանիշների համաձայն:

1. Հետազոտության մոտեցումը (հետազոտության հարցի հստակություն, գրականության տեսության ամբողջականությունը և համապատասխանություն հետազոտության կառուցվածքին և պլանին, հետազոտության մոտեցման և մեթոդոլոգիայի հստակ հիմնավորվածությունը, հետազոտության կառուցվածքի ճշտությունը, հետադոտության մեթոդի ճշտություն, մոտեցման իրականանալիություն, իրականացման ընթացքում հնարավոր բարդությունների և դրանց հաղթահարման ուղիների կանխատեսումը)

2. Առաջարկի յուրօրինակությունը (նոր գիտելիք ստեղծելու ներուժը, առաջարկվող հետազոտության յուրօրինակությունը, նոր տեխնոլոգիաների/մեթոդոլոգիայի և/կամ գոյություն ունեցող տեխնոլոգիայի/մեթոդոլոգիայի կիրառումը)

3. Հայտատուները (հայտատուների որակավորումները՝ ներառյալ մասնագիտական պատրաստվածությունը և փորձը (կախված կարիերայի ներկա փուլից), նրանց փորձը առաջարկվող հետազոտության ոլորտում և առաջարկված մեթոդոլոգիայով, վերջին հինգ տարիների ընթացքում հայտատուների գիտական հրատարակությունները, գրքերը, ստացած

դրամաշնորհները և այլն (Գիտական արդյունավետությունը պետք է դիտարկվի հետազոտության ոլորտի չափանիշների, հայտատուի փորձառության և նրան բաժին հասած հետազոտական միջոցների ենթատեքստում), հետազոտության արդյունքները հաջողությամբ տարածելու կարողություն (հրատարակություններ, զեկուցումներ գիտաժողովների մասնակցություն, ներգրավվածություն մամուլում և այլն), հայտատուների խմբի համապատասխանելիությունը (եթե խմբակային հայտ է) առաջարկված հետազոտությունն իրականացնելու համար՝ փորձառության կոմպլեմենտարության և սիներգետիկ ներուժի տեսանկյունից):

4. Հետազոտության միջավայրը (հետազոտությունն իրականացնելու համար անհրաժեշտ անձնակազմի, սարքավորումների և ենթակառուցվածքի առկայությունն ու հասանելիությունը, միջավայրի համապատասխանելիությունը՝ նախատեսված հետազոտությունն իրականացնելու համար, միջավայրի համապատասխանելիությունը՝ անձնակազմի ուսուցման համար):

5. Հետազոտության ազդեցությունը (հետազոտության առաջարկը վերաբերում է առողջության հետազոտության և/կամ առողջապահական համակարգի առանցքային կարիքին կամ բացին, Կանադայի և ընդհանուր մարդկության առողջության բարելավման մեջ նշանակալի ներդրում և/կամ առողջական ծառայությունների և ապրանքների զարգացման ներուժ, առաջարկված ծրագրի նպատակահարմարությունն ու համապատասխանությունը գիտելիքի տարածմանն ու փոխանակմանը):

Ներքին փորձագետի զեկույցը. ձևաչափ

1. Առաջարկի հակիրճ նկարագրում (հայտի նպատակը, ստուգման պատասխանի ենթակա հարցերը, դրված նպատակները և առաջարկվող մոտեցումը, մինչ օրս արձանագրված առաջընթացը):

2. Հայտի գնահատումը՝ հիմնված գնահատման չափանիշների վրա (դիտարկել հայտի բոլոր գործոնները և ուժեղ ու թույլ կողմերը յուրաքանչյուր չափանիշից ելնելով, ոչ բոլոր գործոններն են պարտադիր կերպով կարևոր յուրաքանչյուր հայտի համար, շեշտը կարող է դրվել յուրահատուկ չափանիշի վրա):

Ձեկույցը պետք է լինի պարզ և համառոտ՝ գրված անկողմնակալ և ոչ վիրավորական լեզվով և պարտադիր ներառի հիմնավորումներ: Հայցորդին ուղղված կառուցողական առաջարկը կարող է օգնել վերջինիս՝ բարելավել առաջարկվող հետազոտության որակն ու արդյունավետությունը:

Բյուջեի և ժամկետի որոշումը

ԱՀԿԻ-ի նպատակն է տրամադրել միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար հաստատված հետազոտության արդյունավետ իրականացումը: Հայտի երաշխավորման գործընթացում վճռորոշ է, որ փորձագետները անհրաժեշտ ուշադրություն դարձնեն բյուջեին, որպեսզի միջոցները բաշխվեն հնարավորինս արդյունավետ: Կան հետազոտության որոշ ոլորտներ, որոնք ավելի թանկարժեք են, քան մյուսները: Դրան գումարած՝ ֆինանսավորվելու հավանականություն ունեցող հայտի համար հանձնաժողովը կարող է առաջարկել միջոցներ տրամադրել հետազոտության միայն այն հատվածների համար, որոնք գիտական տեսանկյունից համարում է արժանի:

Փորձագիտական հանձնաժողովը պետք է կիրառի «սկսել զրոյից» մոտեցումը՝ որոշելու համար պահանջվող միջոցների չափը աջակցման արժանի հետազոտության համար: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր տարվա բյուջեն կազմվում է զրոյից՝ հիմնավորելով յուրաքանչյուր տողը: Հետազոտական անձնակազմի, պրակտիկանտների և նյութերի ու

պարագաների ընդհանուր գումարի հիման վրա կազմվում է տարեկան ընդհանուր բյուջեն: Եթե փորձագիտական հանձնաժողովը գտնում է, որ բյուջեն համապատասխան կերպով հիմնավորված կամ բացատրված չէ՝ հայտը գնահատելու համար, հանձնաժողովը կարող է պահանջել լրամշակում:

Փորձագիտական քննության իրականացումը «Հորիզոն 2020»

ծրագրի շրջանակներում

2011թ. Եվրամիության (ԵՄ) պետությունների և կառավարությունների ղեկավարները կոչ արեցին Եվրահանձնաժողովին (Հանձնաժողով) միավորել ԵՄ հետազոտական և նորարարական բոլոր հիմնադրամները մեկ ռազմավարական ծրագրի շրջանակներում: Արդեն 2013 թ. նախապատրաստական աշխատանքներն ավարտվեցին, և նույն թվականի դեկտեմբերի 11-ին հայտարարվեց առաջին մրցույթը:

«Հորիզոն 2020»-ը ԵՄ հետազոտական և նորարարական խոշորագույն ծրագիր է, որի շրջանակներում նախատեսվում է 2014-2020 թթ. ներդնել շուրջ 80 միլիարդ եվրո՝ չհաշված մասնավոր միջոցները: Ծրագրի նպատակ է այնպիսի պայմանների ապահովումը, որոնք հնարավորություն կտան Եվրոպայում ստեղծել համաշխարհային մակարդակի գիտություն, վերացնել նորարարությունների առջև գոյություն ունեցող արգելքները և հեշտացնել տնտեսության պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը նորարարությունների ստեղծման ուղղությամբ¹²:

«Հորիզոն 2020» ծրագիրն ունի երեք հիմնական բաժին.

1. Գերազանց գիտություն (Excellent Science),
2. Արդյունաբերական առաջնորդություն (Industrial Leadership),

¹² <http://ec.europa.eu/programmes/horizon2020/en/what-horizon-2020>

3. Հասարակական մարտահրավերներ (Societal Challenges)¹³:

Սույն տեղեկագրի շրջանակներում կներկայացվեն առաջին բաժնի շրջանակներում իրականացվող գիտական փորձաքննության հիմնական սկզբունքներն ու գործընթացը:

Փորձագիտական քննություն

Հայտերի ներկայացում

Մրցույթների մասին տեղեկությունները հրապարակվում են ԵՄ պաշտոնական ամսագրում¹⁴: Մրցույթների վերաբերյալ ամբողջական տեղեկությունը գետեղվում է Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական հետազոտական խորհրդի (ԵՀԽ) կայքերում: Յուրաքանչյուր մրցույթի համար հայտատուները պետք է գրանցվեն՝ գնահատման և դրա արդյունքերը հայտնելու ժամանակացույցը որոշելու համար: Հայտերի ներկայացումն ու նախագրանցումը նույնպես իրականացվում են էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հայտի ներկայացումից հետո այն անցնում է համապատասխանելիության քննության փուլ:

Անկախ փորձագետներ

Անկախ փորձագետ համարվում է այն անձը, որը չի հանդիսանում ԵՀԽ-ի կամ Հանձնաժողովի անդամ, գործում է որպես անհատ և իր աշխատանքն իրականացնելիս չի ներկայացնում որևէ կազմակերպություն կամ գիտական

¹³ <http://ec.europa.eu/programmes/horizon2020/en/h2020-sections>

¹⁴ «Հորիզոն 2020» ծրագրի վերաբերյալ այստեղ և հետագայում ներկայացված տվյալները վերցված են ERC Rules for Submission and Evaluation (Version 1.0 15 April 2014): Հասանելի է http://ec.europa.eu/research/participants/data/ref/h2020/sgl/erc/h2020-erc-se-rules_en.pdf հասցեով:

համայնք: Փորձագիտական քննություն իրականացնելու համար ԵՀԽ-ի անկախ փորձագետները կարող են.

1. լինել փորձագիտական խմբի ղեկավար,
2. լինել փորձագիտական խմբի անդամ,
3. գնահատել անհատական հայտերը:

Բացի այդ, անկախ փորձագետները կարող են հանդես գալ որպես փորձագիտական քննության գործընթացի դիտորդներ, իրականացնել նախագծերի էթիկական մոնիթորինգ և այլն:

Փորձագետները կարող են լինել ոչ միայն ԵՄ անդամ երկրներից կամ Հորիզոն 2020 ծրագրին ասոցացված երկրներից: Անկախ փորձագետներին ներկայացվող պահանջներն են.

1. համապատասխան գիտելիքներ այն ոլորտից, որում պետք է իրականացնեն փորձաքննությունը,
2. մասնագիտական փորձի բարձր մակարդակ գիտական հետազոտությունների, դրամաշնորհների կամ գիտական կառավարման ոլորտներում,
3. լեզվական բավարար գիտելիքներ:

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ որակներ:

Փորձագետների խումբ ձևավորելիս Եվրոպական հետազոտական խորհրդի գործադիր մարմինը (ԵՀԽԳՄ) ձգտում է ապահովել գիտական և տեխնիկական փորձաքննության բարձր մակարդակ՝ հաշվի առնելով նաև հետևյալ չափանիշներ.

1. գենդերային հավասարակշռություն,
2. աշխարհագրական բազմազանության ապահովում ԵՄ և ասոցացված երկրների միջև, ինչպես նաև՝ երրորդ երկրների ներկայացուցիչների ողջամիտ ներգրավում:

Փորձագետների կազմը կանոնավոր կերպով թարմացվում է:

Առանձին հայտերը գնահատող փորձագետների անունները գաղտնի են պահվում, սակայն մրցույթի հրավերի մեջ ներգրավված անկախ փորձագետների անունները հրապարակվում են Հանձնաժողովի կայքում, իսկ փորձագիտական խմբերի անդամների ցուցակը հրապարակվում է ԵՀԽ-ի կայքում:

Հայտերի փորձաքննության ընթացքում որևէ ուղղակի կամ անուղղակի շփում ԵՀԽ-ի մրցույթին ներկայացված ծրագրի ղեկավարի և/կամ թիմի անդամի և/կամ նույն մրցույթի շրջանակներում հայտատու հանդիսացող իրավաբանական անձի հետ կապված որևէ անձի և այդ ծրագրի անկախ փորձագետի միջև խստիվ արգելվում է: Այս պայմանի խախտման դեպքում ԵՀԽԳՄ-ն իրավասու է հանել հայտը տվյալ մրցույթից:

Միաժամանակ, հայտատուները հնարավորություն ունեն բացառել երեք փորձագետի իրենց հայտի գնահատման գործընթացից՝ հիմնավորելով իրենց խնդրանքը:

Անկախ փորձագետները կարող են նշանակվել որպես անկախ դիտորդներ՝ քննելու համար փորձագիտական գնահատման գործընթացը: Նրանց խնդիրն է ստուգել փորձագիտական քննության գործընթացը և ոչ թե արդյունքները: Անկախ դիտորդները կարծիք չեն հայտնում ներկայացված հայտերի մասին, այլ միայն անկախ խորհրդատվություն են տրամադրում՝ փորձագիտական քննության գործընթացի որակի բարձրացման նպատակով: Անկախ դիտորդները փոխանցում են իրենց դիտարկումները ԵՀԽ-ին:

Փորձագիտական քննության կազմակերպումը

ԵՀԽ-ի Գիտական խորհուրդը սահմանում է փորձագիտական քննության մեթոդաբանությունը, որը մրցույթից մրցույթ կարող է տարբերվել: ԵՀԽ-ի Գիտական խորհրդի անդամները կարող են դիտորդի կարգավիճակով ներկա գտնվել փորձագետների խմբի հանդիպումներին, սակայն որևէ պարագայում չեն կարող միջամտել դրա աշխատանքներին:

Ցանկացած փորձագիտական քննություն կարող է իրականացվել երկու փուլով: Այդ դեպքում առաջին փուլի արդյունքները հանդիսանում են մեկնակետ երկրորդ փուլի համար:

Փորձագիտական քննության ընթացքում քայլերի հերթականությունը հետևյալն է.

1. Հայտերի բաշխումն ըստ փորձագիտական խմբերի:
2. Հայտերի անհատական գնահատում առնվազն երեք փորձագետի կողմից՝ համապատասխան չափանիշների համաձայն: Ընդ որում, յուրաքանչյուր փորձագետ պետք է հիմնավորի իր տված գնահատականը:
3. Փորձագիտական խմբերի տեղեկատվական խորհրդակցությունների կազմակերպում, որոնց ընթացքում ներկայացվում են՝
 - գնահատման գործընթացն ու ընթացակարգերը,
 - գնահատվող հետազոտությունների բովանդակությունը,
 - փորձագետների համաձայնագրի պայմանները,
 - ավելորդ էջերը հաշվի չառնելու հրահանգը,
 - հայտերի՝ «ինչպես որ կա» գնահատման և բարձր գնահատված հայտերի համար շատ սահմանափակ թվով բարեփոխումների առաջարկների ներկայացման անհրաժեշտությունը:

4. Փորձագիտական խմբի գնահատականի ներկայացում:

5. Հարցազրույցների փուլի անցկացում:

Հիմնվելով փորձագիտական քննության արդյունքների վրա՝ ԵՀԽԳՄ-ը կազմում է ֆինանսավորում ստանալու հավանականություն ունեցող հայտերի ցուցակը: Եթե դրական եզրակացություն ստացած հայտերի համար պահանջվող ֆինանսավորումը գերազանցում է մրցույթով նախատեսված ֆինանսավորման ծավալները, ապա ստեղծվում է հայտերի պահեստային ցուցակ, որի մեջ ներառված հայտերը հնարավորության դեպքում ստանում են համապատասխան ֆինանսավորում:

ԵՀԽ-ի Գիտական խորհուրդը հաստատում է ֆինանսավորման ենթական նախագծերի ցանկը:

Գիտական փորձաքննության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գիտության ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում բազային և պայմանագրային (թեմատիկ) ծրագրերի միջոցով: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինասավորումն նպատակաուղղված է անհատ գիտնականների և փոքր հետազոտական խմբերի (մինչև 5 մարդ) կողմից ներկայացված ու մրցութային կարգով ընտրված փոքրածավալ և կարճատև (մինչև 2 տարի տևողությամբ) հետազոտական նախագծերի իրականացմանը և, ըստ էության, դրամաշնորհային ծրագիր է: Բազային ծրագրերը միտված են առավել զլոբալ հիմնախնդիրների լուծմանը, որոնք են պետության պաշտպանական, տնտեսության, հումանիտար և սոցիալ-տնտեսական ոլորտների առավել կարևոր նշանակություն ունեցող գիտական խնդիրները: Սովորաբար բազային

Ֆինանսավորումը տրվում է հետազոտական պետական հաստատություններին 5 տարի ժամկետով, ավելի ընդգրկուն է, իր մեջ կարող է ներառնել մեծ թվով գիտաշխատողներ, վարչասպասարկող անձնակազմ, տնտեսական ծախսեր և այլն:

Թեմատիկ ֆինանսավորումը ներդրվել է 1993թ., և, չնայած բազային ֆինանսավորման առկայությանը, մինչև 2005թ. գիտության բոլոր ոլորտների ֆինանսավորումն իրականացվում էր հիմնականում թեմատիկ ծրագրերի միջոցով: 2005թ. բազային ֆինանսավորման լայնածավալ գործնական կիրառման արդյունքում գիտական թեմաների 60 տոկոսը սկսեց ֆինանսավորվել բազային, իսկ 40 տոկոսը՝ թեմատիկ ծրագրերով: Գիտնականների ճնշող մեծամասնությունը նախընտրեց բազային ֆինանսավորումը, ինչն ավելի կայուն էր և երկարաժամկետ: Մակայն, միաժամանակ պետք է ընդգծել, որ բազային/թեմատիկ բաժանումը պայմանական էր, ինչը և հանգեցրեց նրան, որ միևնույն թիմում աշխատող գիտնականների մի մասը (հիմնականում տարիքային ավելի բարձր խմբի) ընդգրկվեց բազային ծրագրերում, իսկ ավելի երիտասարդ գիտաշխատողները՝ թեմատիկ ծրագրերում, արդյունքում բազային ու թեմատիկ ծրագրերի մեծ մասը կրկնում էին իրար, որն իրավական տեսանկյունից անթույլատրելի էր:

Բազային ֆինանսավորման գործնական կիրառման պայմաններով առաջին թեմատիկ մրցույթը կազմակերպվեց 2005թ-ին, որի արդյունքում ֆինանսավորվեց շուրջ հազար գիտական թեմա: Հաջորդ թեմատիկ մրցույթը հայտարարվեց 2007թ-ին: Թեև հայտերի հավաքագրման ընթացքում ստեղծվեց Գիտության պետական կոմիտեն (ԳՊԿ) և մրցույթի հանձնաժողովները մտան կոմիտեի կազմի մեջ, սակայն փորձագիտական հանձնաժողովներն արդեն նշանակված էին, և կոմիտեն այդ մրցույթին մասնակցեց վերջին՝

բողոքարկման փուլում: Նշենք նաև, որ ֆինանսավորման կարգերը հաստատվել էին դեռ 2001-2002 թթ., որոնցով սահմանվում էին փորձագիտական հանձնաժողովների ստեղծումը, փորձագետների նշանակումը և թեմատիկ մրցույթների հետ կապված այլ հարցեր¹⁵: 2007թ-ի թեմատիկ մրցույթի բողոքարկման փուլն իրականացվեց արդեն ԳՊԿ կողմից՝ նոր հանձնաժողովների միջոցով: Այս մրցույթի արդյունքում ֆինանսավորվեց շուրջ 710 թեմա:

ԳՊԿ ստեղծումից հետո մասամբ հաջողվեց լուծել թեմաների կրկնողության հետ կապված խնդիրը. մանրամասն ուսումնասիրվեցին ֆինանսավորման երկու համակարգերը և վերհանվեցին կրկնվող ծրագրերը: Արդյունքում, եթե 2008-2011թթ. ֆինասավորվեց 710 գիտական թեմա՝ շուրջ 1 մլրդ 489 մլն դրամ տարեկան ֆինանսավորման ծավալով, ապա 2011-2013թթ-ին գիտական թեմաների քանակը կրճատվեց շուրջ 6 անգամ՝ դառնալով 130, իսկ տարեկան ֆինանսավորման ծավալը կրճատվեց մոտ երկու անգամ՝ հասնելով 760 մլն: Ֆինանսավորման տարբերությունն ավելացվեց բազային ֆինանսավորմամբ ծրագրերին, ինչի արդյունքում հնարավոր եղավ աշխատանքով ապահովել թեմատիկ մրցույթը չչահած գիտական խմբերի բազմաթիվ անդամների: Այսպիսով, թեմատիկ ֆինանսավորման ծավալները վերջին տարիների ընթացքում կազմում են գիտության ոլորտի ֆինանսավորման ընդհանուր ծավալի մոտ 12 տոկոսը:

Վերաձևակերպվեցին նաև բազային ֆինանսավորման և թեմատիկ ֆինանսավորման առջև դրված նպատակները: Մասնավորապես, բազային ֆինանսավորումը դարձավ գիտական կազմակերպությունների ինստիտուցիոնալ ֆինանսավորման ձև՝ գիտական բաղադրիչի պարտադիր ներառմամբ (այսինքն՝ բազայինն ունեցավ հետևյալ կառուցվածքը՝ հիմնարար

¹⁵ Տե՛ս հավելված 2:

գիտություն և ենթակառուցվածքի պահպանություն), իսկ թեմատիկը՝ միջազգային մակարդակի մրցակցային պայմաններում ընտրվող առավել ակտիվ աշխատող գիտական խմբերի և առավել արդիական կարճաժամկետ գիտական թեմաների ֆինանսավորման ծրագիր: Այսինքն, ձևավորվեց հստակ պահանջ, որով թեմատիկ ֆինանսավորման պետք է ներկայացվեին միայն նոր գիտական թեմաներ, որոնք չէին կրկնում արդեն իսկ բազային ֆինանսավորում ստացող գիտական թեմաները և կոմիտեն իրականացնելու էր նաև թեմաների իրականացման նկատմամբ վերահսկողություն՝ թեմաների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների միջոցով: Այս նպատակով ստեղծվեց *անկախ գիտական փորձագիտական համակարգը*: Այդ համակարգի շրջանակներում գիտական թեմաների գնահատումն իրականացվում է տեղացի և արտասահմանցի գիտնականների կողմից: ԳՊԿ, որպես գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմին, իրականացնում է միայն գիտական փորձաքննության կազմակերպումը և փորձագիտական գործունեության իրավական հիմքերի ու ֆինանսավորման ապահովումը:

Փորձաքննություն իրականացնող մարմնի գործառույթները չեն սահմանափակվում մրցույթներին ներկայացված հայտերի և ծրագրերի միանվագ գիտական փորձաքննության կազմակերպմամբ: Այդ մարմինը պետք է իրականացնի նաև գիտական (իրավիճակային վերլուծություններ, համեմատություններ, կանխատեսումներ, վիճակագրություն, և այլն), մոնիթորինգային (շարունակական ուսումնասիրություն ՀՀ գիտության ոլորտի հետ առնչվող բոլոր ներգրավված իրավական ու ֆիզիկական անձերի գիտական գործունեության արդյունավետության), իրավական (փորձաքննության կազմակերպման հետ առնչվող իրավական ակտերի մշակում ու ներկայացում, օգտագործելով իր օրենսդրական

նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունը), կրթական (փորձագետների և հնարավոր հայտատուների համար դասընթացների կազմակերպում՝ փորձագիտական քննության և ներկայացվող հայտերի որակի բարձրացման համար), և այլն: Փորձաքննության առարկա կարող են լինել նաև գիտնականների ու նրանցից կազմված խմբերի, լաբորատորիաների, կազմակերպությունների գիտական գործունեության արդյունավետությունը, պետական ծրագրերը և քաղաքականությունը գիտության տարբեր ոլորտներում, փորձագիտական համակարգն ինքը:

Անկախ գիտական փորձագիտական համակարգ

Անկախ փորձագիտական համակարգը (անկախ փորձագետ ասելով ենթադրվում է, որ փորձագիտական գործունեության ընթացքում գիտնականն արտահայտում է իր անձնական կարծիքը և չի ներկայացնում որևէ կազմակերպության շահերը) սկսվել է ձևավորվել 2009թ.-ից և այսօրվա դրությամբ **փորձագետների շտեմարանում** ընդգրկված են 1500-ից ավել գիտնականներ՝ ՀՀ-ից և արտասահմանից:

ԳՊԿ-ի տվյալների բազան պարունակում է յուրաքանչյուր փորձագետի մասին տեղեկատվություն նրա գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի, ատենախոսությունների, մասնագիտության, հրապարակումների, դրանց բանալի բառերի, տարբեր ծրագրերում ընդգրկվածության և այլնի մասին: Թեմատիկ մրցույթներին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն ու գնահատումը իրականացվում է այդ համակարգում ընդգրկված փորձագետների միջոցով:

Բացի թեմատիկ ծրագրերից, անկախ գիտական փորձաքննությունն իրականացվում է նաև թեմաների կատարման վերաբերյալ

հաշվետվությունների, կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության, անհատ գիտնականների աշխատանքի արդյունավետության, գիտական քաղաքականության արդյունավետության որոշման, նաև՝ փորձագետների փորձագիտական քննության համար: Հատկանշական է, որ իրականացվում է նաև գիտական ոլորտի փորձաքննություն՝ տվյալ ոլորտի գիտության վիճակը որոշելու և ֆինանսավորում հատկացնելու համար: Այս փորձաքննության արդյունքում որոշվում են նաև ռազմավարական նախապատվությունները:

Փորձագետներին առաջարկվող պահանջները: Փորձագետների ընտրությունը

Փորձագետների առաջադրումը և ընտրությունը կատարվում է հետևյալ կերպ.

- Ինքնաառաջադրում, երբ փորձագետն ինքն է առաջարկում իր թեկնածությունը որպես փորձագետ, լրացնելով ԳՊԿ-ի կայքում տեղադրված ձևը:
- ԳՊԿ նամակով դիմում է գիտահետազոտական ինստիտուտներին՝ խնդրելով առաջարկել փորձագետներ ոչ միայն տվյալ հիմնարկությունից, այլև՝ դրսից: Այս պահանջի հիման վրա գիտական տարբեր հաստատություններ ուղարկում են առաջարկվող փորձագետների կենսագրականները՝ թեկնածուի ստորագրությամբ:
- Արդեն իսկ փորձագետների շտեմարանում ընդգրկված անձանց առաջարկվում է ներկայացնել փորձագետների՝ մեծ կարևորություն տալով հատկապես արտասահմանցիների թեկնածությանը: Նոր

թեկնածուներին ևս խնդրվում է ներկայացնել իրենց կենսագրությունները և փորձագետ լինելու համաձայնությունը:

- Որպես արտասահմանցի փորձագետ շտեմարանում ընդգրկվում են ՀՀ ԳԱԱ արտասահմանցի անդամները:
- ԳՊԿ կողմից կազմակերպվող մրցույթների համար ներկայացված և ֆինանսավորված հայտերի ղեկավարները նույնպես պոտենցիալ փորձագետներ են:

Փորձագետների շտեմարանում տվյալ փորձագետի համար նշվում են բանալի բառեր և դասիչներ, որոնք կազմվում են տվյալ փորձագետի կողմից իր հայտում նշված բանալի բառերից, ինչպես նաև ԳՊԿ ավելացնում է բանալի բառեր՝ ելնելով տվյալ փորձագետի գիտական ուղղությունից, նրա թեզի և նրա կողմից ղեկավարված թեզերի դասիչներից, ինչպես նաև տվյալ փորձագետի գիտական հոդվածներում նշված բանալի բառերից և դասիչներից: Ընդ որում, այս աշխատանքը շարունակական բնույթ է կրում:

Տվյալ մրցույթի որևէ թեմայի փորձագետի ընտրության համար հաշվի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ փորձագետին առաջարկվող պահանջները չպետք է զիջեն մրցույթի հայտի ղեկավարին ներկայացվող պահանջներին:

Փորձագետը կարող է նաև հեռացվել փորձաքննության գործընթացից, եթե չեն բավարարում որոշակի պայմանների: Օրինակ, փորձագետի համար խիստ բացասական է, եթե նրա կողմից բարձր գնահատված հայտի կատարողականը շատ ցածր է, կամ փորձագետը գործարքի մեջ մտնելով հայտատուի հետ, կամ չի հայտնել շահերի բախման մասին (ԳՊԿ շահերի բախումը ստուգում է շահերի բախման սեփական բազաներով): Երբ

փորձագետը անցնում է նախատեսված նվազագույն շեմը, նրան այլևս չի վստահվում որևէ նյութ փորձաքննություն իրականացնելու համար:

Յուրաքանչյուր հայտի համար հայտատուի կողմից նշված բանալի բառերով ընտրվում են մինչև մեկ տասնյակ փորձագետներ: Հաջորդ փուլում ստուգվում է, թե արդյոք ընտրված փորձագետների մեջ կան հայտում մատնանշված անցանկալի փորձագետներ, որը հայտատուն մրցույթին ներկայացվող իր հայտում կարող է նշել: Այնուհետև, ԳՊԿ իրականացնում է շահերի բախման փորձաքննություն: Ուսումնասիրվում են հայտատուի և փորձագետի միջև եղած հնարավոր կապերը: Մասնավորապես, բարեկամական կապ, աշխատանքային սերտ հարաբերություններ (այսինքն՝ համատեղ հոդվածների առկայությունը, նույն լաբորատորիայում աշխատելը, իրար անմիջական վարչական ենթակայության տակ լինելը): Ընդ որում, փորձագետ-հայտատու աշխատանքային հարաբերությունների ընդհատման տևականությունը պետք է լինի առնվազն 10 տարի, որպեսզի տվյալ անձը իրավունք ստանա որպես փորձագետ հանդես գալ տվյալ հայտատուի աշխատանքը փորձաքննելու համար:

Ընտրության նշյալ փուլերի արդյունքում պայմաններին բավարարած փորձագետների ցուցակները տրվում են Մասնագիտական փորձագիտական հանձնաժողովներին (այսուհետև՝ հանձնաժողով) վերջնական խմբագրման և հաստատման:

ԳՊԿ կողմից հայտարարված մրցույթների հրավերներում, հիմնվելով նախորդ մրցույթների հայտատուների արձագանքների վրա, արդեն ներառվում է նաև փորձաքննության մեթոդաբանությունը՝ պահանջներն ու սկզբունքները: Սրա նպատակն է փորձագետին և հայտատուին ներկայացնել, թե ինչ սկզբունքների հիման վրա և ինչպես է գնահատվելու տվյալ մրցույթին ներկայացված նախագիծը: Արդյունքում, հայտատուն հնարավորություն է

ունենում ավելի որակով և ամբողջական հայտ ներկայացնել: Ներկայումս ԳՊԿ մշակում է ուղեցույցներ նաև փորձագետների համար:

Մասնագիտական փորձագիտական հանձնաժողովներ: Փորձագետների ընտրությունը

Յուրաքանչյուր մրցույթի ժամանակ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության 6 բնագավառների (բնական գիտություններ, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, բժշկական գիտություններ, գյուղատնտեսական գիտություններ, հասարակական գիտություններ, հայագիտություն և հումանիտար գիտություններ), ձևավորվում են մասնագիտական փորձագիտական հանձնաժողովներ: Հանձնաժողովների անդամները առաջարկվում են շահագրգիռ գիտական հիմնարկներից, իսկ հանձնաժողովների նախագահներին նշանակում է Կրթության և գիտության նախարարը: Յուրաքանչյուր ոլորտի համար հանձնաժողովներում նշանակվում է ոլորտի պատասխանատու: Այս կամ այն բնագավառի խորհուրդը/հանձնաժողովը նախ խմբավորում է հայտերը՝ ըստ թեմատիկ ուղղվածության բլոկների (օրինակ “Ֆիզիկա” բնագավառի համար ձևավորվում է “Պինդ մարմնի ֆիզիկա”, “Լազերային ֆիզիկա”, “Գրավիտացիայի տեսություն”, “Կիսահաղորդիչների ֆիզիկա” և այլն): Այնուհետև կոմիտեի փորձագետների շտեմարանից հայտերի յուրաքանչյուր փաթեթի համար ձևավորում է փորձագետների հնարավոր խումբ, և փորձագետների ցուցակներն (փորձագետների ցուցակը կազմվում է այբբենական կարգով) ու հայտերը տրամադրվում են ոլորտների պատասխանատուներին: Այս ամբողջ գործընթացը իրականացվում է խորհրդի նախագահի և տվյալ ոլորտի պատասխանատու անդամի

ներկայությամբ: Ոլորտների պատասխանատուները ևս կարող են խմբագրել հնարավոր փորձագետների ցուցակները, կարող են նաև առաջարկել լրացուցիչ փորձագետներ ՀՀ-ից և արտասահմանից, եթե առկա է հանձնաժողովի համաձայնությունը: Նոր առաջարկված և հանձնաժողովի կողմից ընդունված փորձագետների դեպքում ԳՊԿ կրկին անցկացնում է շահերի բախման և անցանկալի փորձագետների ստուգման փուլերը: Վերջնական խմբագրված ցուցակները վերադարձվում են ԳՊԿ: Մովորաբար յուրաքանչյուր փաթեթում ընգրկվում է 6-10 փորձագետ Հայաստանից և որոշ թվով էլ՝ արտասահմանից: Փորձագետների խումբը այբբենական կարգով ձևավորելուց հետո համակարգչային հատուկ ծրագիրը պատահական թվերի մեթոդով փոփոխում է փորձագետների անունների դասավորվածությունը: Վերադասավորված ցուցակը հաստատվում է և այնտեղից ընտրվում են առաջին-երկու փորձագետները, իսկ եթե մրցույթը պահանջում է նաև արտասահմանցի փորձագետի առկայություն, ապա ընտրվում են ցուցակի առաջին համարի ՀՀ և առաջին համարի արտասահմանից փորձագետները, որոնց ինքնության մասին խորհրդի անդամները չեն տեղեկացվում:

Այնուհետև ԳՊԿ հայտերը ուղարկում է փորձագետներին: Ընտրված փորձագետների համաձայնության պարագայում սկսվում է փորձաքննության իրականացումը: Եթե փորձագետը ինչ-որ պատճառով չի համաձայնվում փորձաքննել տվյալ աշխատանքը կամ բլոկը, ապա հաստատված ցուցակից ընտրվում է հաջորդ փորձագետը: Եթե ցուցակի և ոչ մի փորձագետ չի համաձայնվում փորձաքննությանը, ապա ԳՊԿ-ն դիմում է ոլորտի պատասխանատուին՝ խնդրելով տրամադրել լրացուցիչ փորձագետների անուններ:

Յուրաքանչյուր տեղացի փորձագետի հետ կնքվում է Փորձագիտական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր:¹⁶ Իրականացվող փորձաքննությունը վճարովի է, և յուրաքանչյուր հայտի համար հատկացվող վճարման չափը մոտ է միջազգայնորեն ընդունված նորմերին: Արտասահմանցի փորձագետները փորձաքննությունն իրականացնում են առայժմ անվճար:

Հայտերի գնահատումը

Յուրաքանչյուր մրցույթի համար ԳՊԿ-ն կազմում է հարցաշար, որը տրվում է մասնագիտական հանձնաժողովներին: Վերջիններս խմբագրում են հարցաշարը, որն այնուհետև հաստատվում է և որի հիման վրա իրականացվում է փորձաքննությունը: Հարցաթերթիկը, կախված կոնկրետ մրցույթից, կարող է պարունակել 5-ից մինչև 20 հարց: Յուրաքանչյուր հարցի գնահատման համար օգտագործվում է սանդղակ՝ 0-5 միավորով (0.5 միավորի ճշտությամբ)։

0 միավոր – հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

1 միավոր – հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

2 միավոր – հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

3 միավոր – հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք, սակայն, շտկելի են,

¹⁶ Տես հավելված 3:

4 միավոր – հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

5 միավոր – հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը գիտական թեման իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը և դրա իրականացման ժամկետները, ծրագրի համար նախատեսված ֆինանսների ծախսման արդյունավետությունը, գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

Հայտի գիտական փորձաքննությունն իրականացնում է փորձագետը: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը առցանց լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին¹⁷: Ներկայումս երկամյա ֆինանսավորմամբ ծրագրերում անկախ փորձագետների գնահատականը կազմում է վերջնական գնահատականի մինչև 85 տոկոսը: Երկու փորձագետների գնահատականները միջինացվում են, և ըստ գնահատականների կազմվում է վարկանիշային ցանկ: Եթե երկու փորձագետների գնահատականները տարբերվում են գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով, ապա հայտը տրվում է փորձագետների հաստատված ցուցակի հաջորդ փորձագետին: Այդ դեպքում,

¹⁷ Տես հավելված 4:

գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է: Ընդ որում, անհրաժեշտ հիմքերի առկայության պարագայում Խորհրդի անդամները Խորհրդի համաձայնությամբ կարող են հայտը ուղարկել լրացուցիչ փորձագետի:

Վերջնական գնահատականի մնացած 15 տոկոսը խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորման գնահատականն է: Այդ գնահատականը տրվում է խորհրդի կողմից՝ նախքան փորձագետների գնահատականների հայտնի լինելը և ձևավորվում է խմբի ղեկավարի և կատարողների հրապարակումների գիտաչափական տվյալների հիման վրա: Ընդ որում, մասնակիցների վերաբերյալ գիտաչափական տվյալները ներկայացվում են ԳՊԿ կողմից, իսկ մասնագիտական խորհուրդները գնահատում են այդ տվյալներից ելնելով¹⁸:

Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և խորհրդի գնահատականի գումարն է:

Հայտերի գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի համար, Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհուրդ՝ քննարկման: Խորհուրդը Կոմիտեի նախագահին է

¹⁸ Գիտաչափական տվյալների մեթոդաբանությունը տե՛ս հավելված 5:

ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

Հայտերի ֆինանսավորում

Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Ինչպես նաև իր հրամանով հաստատում է գիտական թեմաների ցանկն ու դրանց ղեկավարների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը:

ԳՊԿ նախագահի որոշումները հենվում են փորձագիտական խորհրդի կողմից ներկայացված «ռեյտինգային գնահատականների վրա»:

Կոմիտեն, գիտական կազմակերպության ղեկավարի միջոցով, տվյալ կազմակերպությունից ներկայացված հայտերի ղեկավարներին է տրամադրում հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականներն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի շեմային գնահատականը: Եթե հայտը ներկայացվել է անհատական նախաձեռնությամբ, ապա վերջիններս տրամադրվում են խմբի ղեկավարին:

Մրցույթի արդյունքների բողոքարկում

Ներկայումս հայտատուն կարող է բողոքարկել մրցույթի արդյունքները՝ դրանց մասին տեղեկանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում:

Բողոքարկումն իրականացվում է ԳՊԿ ներկայացված գրավոր դիմումի հիման վրա: Բողոքարկման փուլին կարող են մասնակցել ֆինանսավորում չստացած բոլոր թեմաները:

Բողոքարկման փուլում հայտերը տրվում են ևս մեկ փորձագետի՝ փորձագետների ցուցակից՝ կրկնակի գիտական փորձաքննություն անելու համար: Բողոքարկման արդյունքում կազմվում է նոր վերջնական գնահատական, որը վերջին փորձագետի գնահատականի և այդ գնահատականին մոտ սկզբնական գիտական փորձաքննության գնահատականի միջին թվաբանականն է:

Բողոքարկման արդյունքում գիտական թեման երաշխավորվում է ֆինանսավորման, եթե նոր ձևավորված վերջնական գնահատականը գերազանցում է կամ հավասար է գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության համար սահմանված շեմային գնահատականին:

Եթե բողոքարկման արդյունքում տվյալ բնագավառի շեմային գնահատականը հաղթահարել են ավելի շատ հայտեր, քան հնարավոր է ֆինանսավորել, ապա խորհուրդը կազմակերպում է այցելություն գիտական կազմակերպություն, որտեղ իրականացվելու է գիտական թեման, տեղում ծանոթանում գիտական թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայությանը, որից հետո միայն տալիս է առաջարկություն՝ հայտը ֆինանսավորվող գիտական թեմաների ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

Հայտի կրկնակի գիտական փորձաքննության հիման վրա ԳՊԿ նախագահի որոշումը վերջնական է:

Անհրաժեշտ է նշել, որ փորձաքննությունը շարունակական է և ուղեկցում է աջակցված հայտին կամ ծրագրին իր ամբողջ կենսական ցիկլում՝

իրականացման ընթացքում, ավարտելուց անմիջապես հետո և որոշ ժամանակ անց: Այսինքն՝ իրականացվում է ընթացիկ, տարեկան և ամփոփիչ ավարտական հաշվետվությունների փորձաքննություն, ինչպես նաև հետահայաց փորձաքննություն մի քանի տարի անց: Այդ փորձաքննությունների արդյունքները կարևոր են նախագծերի և ծրագրերի իրականացմանը միջամտելու համար (փոխելու ֆինանսավորման ծավալները կամ դադարեցնելու այն), հավանություն տված կամ չտված փորձագետների փորձագիտական ունակությունները գնահատելու, ինչպես նաև մրցույթի նպատակների իրականացման աստիճանն ու արդյունավետությունը գնահատելու համար:

Շարունակական փորձաքննության արդյունքում ձեռք բերվող տվյալները օգտագործվում են տվյալ անձանց, խմբերի, կազմակերպությունների կողմից ներկայացվող այլ հայտերը և ծրագրերը դիտարկելու ժամանակ, ֆինանսավորող մարմնի վարած քաղաքականության արդյունավետությունը գնահատելու ու ճշգրտումներ մտցնելու համար, ինչպես նաև փորձաքննության գործընթացը կատարելագործելու և ներգրավվող փորձագետների փորձագիտական ունակությունները հաստատելու կամ կասկածի տակ առնելու համար:

Համակարգում ներմուծված նորությունները

2013թ. անցկացված պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հայտերի մրցույթը կարևորվեց մի շարք նորություններով՝

1) Ավելացվեցին մեկ թեմայի ֆինանսավորման ընդհանուր ծավալները՝ մոտեցնելով միջազգային ստանդարտներին: Առավելագույն գումարը թեմատիկ ֆինանսավորման համար սահմանվեց 16.0 մլն դրամ /երկու տարվա համար/, ինչը հնարավորություն տվեց միջին ամսական

աշխատավարձը 65.0 հազար դրամից դարձնել 100.0 հազար դրամ, ինչպես նաև՝ ավելացնել նյութերի, սարքերի և սարքավորումների ձեռքբերման և գիտական գործուղումների համար նախատեսված ֆինանսական հատկացումները:

2) Ներդրվեց արտասահմանյան խորհրդատուի ինստիտուտը, ինչը ոչ միայն հնարավորություն է տալիս ՀՀ գիտության ոլորտի ծրագրերից մեկը դարձնել բաց ու հասանելի օտարերկրյա գիտնականների համար, այլ նաև՝ կապեր հաստատել արտերկրի բարձր հեղինակություն ունեցող գիտական կառույցների հետ, ամրապնդել եւ զարգացնել սփյուռքի և արտասահմանի գիտնականների հետ հայ գիտնականների կապերը:

3) Ներդրվեց հայտերի լրացման և ընդունման առցանց համակարգը՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին: Համակարգի ներդրումը վերացրեց նաև ավելորդ թղթաբանությունը՝ գործընթացը դարձնելով ավելի դյուրին, հեշտ կիրառելի և կառավարելի, ինչպես նաև մոտեցնելով ՀՀ փորձաքննության համակարգը միջազգային չափանիշներին:

4) Հայտի ղեկավարները հնարավորություն ունեցան նշելու մինչև 3 անցանկալի փորձագետի անուն, ինչը զգալիորեն նվազեցնում է շահերի բախման հնարավորությունները:

5) Հայտի փորձագիտական գնահատականի 15 տոկոսը ձևավորվում է ֆորմալ չափանիշներով՝ հիմնված գիտաչափական տվյալների վրա, ինչը նվազեցնում է անկախ փորձագետների, ինչպես նաև փորձագիտական խորհրդի անդամի կամ նախագահի այս կամ այն հայտատուի նկատմամբ հնարավոր կողմնակալ վերաբերմունքի վտանգը:

Կարևորելով գիտության ոլորտի երիտասարդացման անհրաժեշտությունը՝ 2008թ-ից թեմատիկ ծրագրերի համար ներդրվել է թիմի

կազմում առնվազն մեկ երիտասարդ գիտնական ունենալու պարտադիր պայմանը: Գիտության ոլորտ երիտասարդներին ներգրավելու համար յուրաքանչյուր տարի հայտարարվում են հատուկ թեմատիկ ծրագրեր՝ նախատեսված երիտասարդ գիտնականների, ասպիրանտների եւ հայցորդների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության իրավական եւ կազմակերպական հիմքերը, կարգավորում փորձաքննական գործընթացի մասնակից սուբյեկտների իրավահարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննություն (այսուհետ՝ փորձաքննություն)՝ փորձաքննության օբյեկտի գիտական եւ (կամ) գիտատեխնիկական մակարդակի ուսումնասիրության, վերլուծության եւ գնահատման, ինչպես նաեւ այդ օբյեկտի վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմնավորված եզրակացություն պատրաստելու նպատակով իրականացվող գործունեություն.

2) փորձաքննության օբյեկտ՝ գիտական եւ (կամ) գիտատեխնիկական արդյունք կամ փորձարարական մշակում՝ դրա ստեղծման եւ ներդրման տարբեր փուլերում.

3) փորձաքննության սուբյեկտ՝ փորձաքննության պատվիրատուի, կազմակերպչի կամ փորձաքննություն կատարողի գործառույթներն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

4) փորձաքննության պատվիրատու՝ փորձաքննություն նախաձեռնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

5) փորձաքննության կազմակերպիչ՝ փորձաքննական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

6) փորձագետ՝ համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող եւ փորձաքննության օբյեկտի ուսումնասիրությունը, վերլուծությունն ու գնահատումը կատարող ֆիզիկական անձ.

7) անկախ փորձագետ՝ փորձագետ, որը փորձաքննություն կատարելու ընթացքում չի ներկայացնում որեւէ կազմակերպության շահը.

8) գիտական եւ գիտատեխնիկական փորձագիտական եզրակացություն (այսուհետ՝ փորձագիտական եզրակացություն)՝ փորձաքննության օբյեկտի ուսումնասիրության արդյունքներն արտացոլող եւ փորձաքննության առջեւ դրված հարցերի պատասխանները պարունակող փաստաթուղթ.

9) լիազոր մարմին՝ փորձաքննական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմին:

Հոդված 3. Փորձաքննության հիմնական խնդիրները

1. Փորձաքննության հիմնական խնդիրներն են՝

1) փորձաքննության օբյեկտի համալիր ուսումնասիրությունը եւ հիմնավորված փորձագիտական եզրակացության պատրաստումն ու տրամադրումը.

2) փորձաքննության օբյեկտի ներդրման դեպքում՝ դրա համապատասխանության ստուգումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերին եւ պահանջներին.

3) փորձաքննության օբյեկտի գիտական եւ (կամ) գիտատեխնիկական մակարդակի գնահատումը եւ դրա ներդրման դեպքում՝ նաեւ գիտատեխնիկական, սոցիալական, տնտեսական, բնապահպանական, ֆինանսական եւ իրավական հետեւանքների կանխատեսումը:

Հոդված 4. Փորձաքննության հիմնական սկզբունքները

1. Փորձաքննության հիմնական սկզբունքներն են՝

1) փորձագիտական գնահատման անաչառությունը.

2) փորձագիտական եզրակացության հիմնավորվածության, ամբողջականության եւ հավաստիության համար պատասխանատվությունը.

3) փորձաքննության սուբյեկտների անկախությունը.

4) փորձագիտական գործունեության կազմակերպվածությունն ու մեթոդաբանական ապահովվածությունը.

5) համաշխարհային գիտական եւ գիտատեխնիկական առաջընթացի արդի մակարդակը, տեխնիկական եւ բնապահպանական անվտանգության նորմերն ու կանոնները հաշվի առնելը.

6) փորձագետների մասնագիտական բարձր մակարդակը,

7) փորձագետների իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ փորձագետի պարտականությունների կատարման հետ կապված հետապնդումներից:

Հոդված 5. Փորձաքննության ձևերն ու տեսակները

1. Փորձաքննության ձևերն են՝

1) պետական փորձաքննություն՝ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ եւ պատվերով իրականացվող փորձաքննություն.

2) հասարակական փորձաքննություն՝ հասարակական կազմակերպությունների եւ (կամ) միավորումների նախաձեռնությամբ եւ պատվերով իրականացվող փորձաքննություն՝ հասարակական կարծիքը հաշվի առնելու անհրաժեշտություն պահանջող գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ցանկացած բնագավառում.

3) մասնագիտական փորձաքննություն՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նախաձեռնությամբ եւ պատվերով իրականացվող փորձաքննություն՝ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության կոնկրետ խնդիրների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

2. Փորձաքննության տեսակներն են՝

1) նախնական փորձաքննություն՝ տեխնիկական եւ բնապահպանական անվտանգության սահմանված նորմերին եւ կանոններին, ստանդարտներին եւ այլ պահանջներին փորձաքննության օբյեկտի համապատասխանության ստուգում.

2) հիմնական փորձաքննություն՝ փորձաքննության օբյեկտի վերաբերյալ հիմնավորված փորձագիտական եզրակացություն պատրաստելու համար անհրաժեշտ եւ փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացում.

3) կրկնակի փորձաքննություն՝ հիմնական փորձաքննություն իրականացնելու պահանջների եւ կանոնների խախտման կամ փորձագիտական եզրակացության վերաբերյալ հիմնավորված առարկությունների դեպքում փորձաքննության պատվիրատուի կամ փորձաքննության օբյեկտի հեղինակի պահանջով կամ փորձագիտական եզրակացության (ամբողջական կամ մասամբ) հետ փորձաքննության պատվիրատուի անհամաձայնության դեպքում նրա նախաձեռնությամբ եւ պատվերով իրականացվող փորձաքննություն.

4) լրացուցիչ փորձաքննություն՝ փորձաքննության օբյեկտի վերաբերյալ փորձաքննության պատվիրատուի կողմից գիտական եւ գիտատեխնիկական նոր պարագաների ի հայտ գալով

կամ հիմնական եւ կրկնակի փորձաքննությունների փորձագիտական եզրակացությունների անհամապատասխանությամբ կամ ուժը կորցրած փորձագիտական եզրակացությամբ պայմանավորված փորձաքննություն:

3. Նախնական փորձաքննությունն իրականացնում է փորձաքննության պատվիրատուն՝ իր մասնագիտացված ստորաբաժանումների միջոցով կամ անկախ փորձագետներ ընդգրկելու ճանապարհով:

4. Հիմնական, կրկնակի եւ լրացուցիչ փորձաքննությունն իրականացնում են իրավաբանական անձինք՝ ըստ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով, 7-րդ եւ 10-րդ հոդվածներով սահմանված պահանջների:

Հոդված 6. Պարտադիր փորձաքննության օբյեկտները

1. Պարտադիր փորձաքննության օբյեկտներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից կամ դրանց մասնակցությամբ հիմնադրած հիմնադրամներից ֆինանսավորման ենթակա կամ ֆինանսավորվող գիտական եւ գիտատեխնիկական գործունեության նախագծերը, ծրագրերը, փորձարարական մշակումները, տեխնոլոգիաները, ինչպես նաեւ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության այլ արդյունքը.

2) փորձաքննության օբյեկտ, որի նկատմամբ առաջացել է հիմնավորված փորձագիտական եզրակացություն ստանալու անհրաժեշտություն, որի վերաբերյալ տրվում է այն ընդունելու, ներդնելու, օգտագործելու, ֆինանսավորելու եւ տարածելու նպատակահարմարության վերաբերյալ երաշխավորություն:

Հոդված 7. Փորձաքննության մասնակիցների իրավունքները եւ պարտականությունները

1. Փորձաքննության պատվիրատուի հիմնական իրավունքներն են՝

1) նախնական, հիմնական, կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ որոշում ընդունելը.

2) փորձաքննության կազմակերպչին ընտրելը.

3) փորձաքննության կազմակերպչի կամ փորձագետի հետ պայմանագրեր կնքելը.

4) փորձաքննության կազմակերպչին փորձագետներին փոխելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

5) փորձաքննության կազմակերպչից փորձաքննության իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալը եւ պարզաբանումներ, դիտողություններ, հանձնարարականներ ներկայացնելը՝ փորձաքննական գործընթացի բոլոր փուլերում:

6) փորձաքննության արդյունքները սեփականության իրավունքով տնօրինելը, եթե փորձաքննություն կազմակերպելու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Փորձաքննության պատվիրատուն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

3. Փորձաքննության պատվիրատուի հիմնական պարտականություններն են՝

1) փորձաքննության օբյեկտի բազմակողմանի, անաչառ եւ գիտականորեն հիմնավորված համալիր վերլուծության ու անկախ փորձագիտական գնահատման հարցերում փորձաքննության կազմակերպչին աջակցելը:

2) փորձաքննության կազմակերպչին փորձաքննության օբյեկտին առնչվող լրացուցիչ տեղեկություններ տրամադրելը:

3) փորձաքննության կազմակերպման գաղտնիության ու փորձագետների անանունության ապահովումը:

4) փորձաքննության օբյեկտի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննության ներկայացնելը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում:

5) փորձաքննության կազմակերպչին եւ փորձագետներին՝ իրականացված փորձաքննության դիմաց վճարելը՝ պայմանագրով նախատեսված դեպքերում եւ չափով:

6) իր անօրինական գործունեության արդյունքում պատճառած նյութական եւ բարոյական վնասները փոխհատուցելը:

4. Փորձաքննության պատվիրատուն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

5. Փորձաքննության կազմակերպչի հիմնական իրավունքներն են՝

1) փորձագետներին ընտրելը:

2) փորձագետների հետ պայմանագրեր կնքելը:

3) փորձաքննության պատվիրատուից փորձաքննության օբյեկտին առնչվող լրացուցիչ տեղեկություններ պահանջելը:

4) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից, գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություններից փորձաքննության օբյեկտին առնչվող տեղեկություններ պահանջելը՝ օրենքով սահմանված կարգով.

5) փորձաքննություն իրականացնելու գործընթացում գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություններ, հայաստանյան եւ օտարերկրյա գիտնականներ ներգրավելը.

6) փորձագետների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը՝ միայն վերջիններիս գրավոր համաձայնության դեպքում:

6. Փորձաքննության կազմակերպիչն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

7. Փորձաքննության կազմակերպիչի հիմնական պարտականություններն են՝

1) փորձաքննության պատվիրատուի կողմից պայմանագրով առաջադրված բոլոր հարցերի վերաբերյալ հիմնավորված փորձագիտական եզրակացություն տալը.

2) փորձաքննության համալիր, որակյալ եւ արդյունավետ իրականացումը.

3) փորձաքննություն իրականացնելու պայմանագիրը կնքելիս փորձագետների մասնագիտական որակավորումը հաստատող վկայականներ կամ դրանց փոխարինող այլ փաստաթղթեր ներկայացնելը՝ փորձաքննության պատվիրատուի պահանջով.

4) փորձագետների անանունության ապահովումը.

5) փորձաքննության օբյեկտի հիմնական, կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություններից որեւէ երկուսում միեւնույն փորձագետի ներգրավման բացառելը.

6) փորձաքննության օբյեկտի նկատմամբ հեղինակային եւ արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանումը, փորձաքննության պատվիրատուին փորձաքննության օբյեկտին առնչվող լրացուցիչ տեղեկությունների մեջ պարունակվող հեղինակային եւ արդյունաբերական սեփականության իրավունքների մասին տեղեկացնելը՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում.

7) փորձաքննության օբյեկտի ուսումնասիրության, գնահատման եւ փորձագիտական եզրակացություն նախապատրաստելու ժամանակ գիտական եւ գիտատեխնիկական զարգացման համաշխարհային արդի մակարդակի հաշվի առնելը.

8) փորձաքննության նյութերի, փորձագետների կարծիքների եւ չհաստատված փորձագիտական եզրակացությունների հրապարակում թույլ չտալը՝ առանց փորձաքննության պատվիրատուի համաձայնության.

9) սույն օրենքի եւ այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ կազմված փորձագիտական եզրակացություններ մերժելը կամ լրամշակման ուղարկելը.

10) փորձագիտական եզրակացության կամ դրա հիման վրա ընդունվող որոշումների փոփոխության հարցերում փորձագետների եւ փորձաքննական գործընթացի մեջ ներգրավված այլ անձանց անձնական շահագրգռվածությունը բացառելը:

8. Փորձաքննության կազմակերպիչն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

9. Փորձագետի հիմնական իրավունքներն են՝

1) փորձաքննության օբյեկտին եւ մեթոդաբանությանը վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ անձնական կարծիքն ազատ արտահայտելը.

2) փորձաքննության օբյեկտի ուսումնասիրությանը, վերլուծությանը եւ գնահատմանը մասնակցելը՝ փորձաքննության բոլոր փուլերում.

3) անաչառ փորձագիտական եզրակացություն նախապատրաստելու համար լրացուցիչ նյութեր պահանջելը.

4) փորձաքննության օբյեկտի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն ստանալը, այդ թվում՝ նաեւ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

5) փորձաքննության մասնակցելը կամ մասնակցելուց հրաժարվելը, եթե վերջինս անմիջականորեն կապված չէ ծառայողական պարտականությունների կատարման հետ.

6) փորձագիտական եզրակացություն հրապարակելը, եթե դա նախատեսված է փորձաքննություն իրականացնելու պայմանագրով.

10. Փորձագետն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

11. Փորձագետի իրավունքները ծագում են փորձաքննություն կատարելու նպատակով իր հետ կնքած պայմանագրի կամ նրա ծառայողական պարտականությունների հիմքով, եթե փորձաքննությունը կատարվում է որպես ծառայողական առաջադրանք:

12. Փորձագետի հիմնական պարտականություններն են՝

1) փորձաքննություն իրականացնելու պայմանագրի պահանջներին ու ժամկետին համապատասխան փորձաքննություն կատարելը.

2) փորձաքննության պատվիրատուի կամ կազմակերպչի պահանջով իր մասնագիտական որակավորումը հաստատող վկայականներ կամ դրանց փոխարինող այլ փաստաթղթեր ներկայացնելը.

3) փորձագիտական եզրակացության կամ երաշխավորության հիմնավորվածությունը, ամբողջականությունը եւ հավաստիությունն ապահովելը.

4) փորձաքննություն կատարելուց հրաժարվելը, եթե առկա է շահերի բախում՝ փորձաքննության օբյեկտի հեղինակություն կամ համահեղինակություն կամ այլ տիպի գործոններ, որոնք կարող են ազդել փորձաքննության օբյեկտի ուսումնասիրության, գնահատման ու վերլուծության անաչառության վրա.

5) փորձաքննության օբյեկտի ուսումնասիրություն, գնահատում եւ վերլուծություն իրականացնելիս գիտական եւ գիտատեխնիկական զարգացման համաշխարհային արդի մակարդակը հաշվի առնելը.

6) փորձաքննության օբյեկտի նկատմամբ հեղինակային եւ արդյունաբերական սեփականության իրավունքները պահպանելը, փորձաքննության կազմակերպչին եւ (կամ) պատվիրատուին փորձաքննության օբյեկտին առնչվող լրացուցիչ տեղեկությունների մեջ պարունակվող հեղինակային եւ արդյունաբերական սեփականության իրավունքների մասին տեղեկացնելը՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում.

7) փորձաքննության նյութերի մեջ պարունակվող տեղեկատվության հրապարակում թույլ չտալը, եթե փորձաքննություն իրականացնելու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

8) անհրաժեշտության դեպքում փորձաքննության օբյեկտի գիտական եւ գիտատեխնիկական բնագավառին հարակից կամ գիտության, տեխնիկայի ու արտադրության այլ բնագավառների անկախ փորձագետների լրացուցիչ ներգրավման վերաբերյալ հարց բարձրացնելը:

13. Փորձագետն ունի նաեւ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

Հոդված 8. Փորձաքննության սուբյեկտների իրավահարաբերությունները

1. Փորձաքննության պատվիրատուի, փորձաքննության կազմակերպչի, ինչպես նաեւ փորձագետների միջեւ հարաբերությունները կարգավորվում են պայմանագրերով: Փորձաքննության պատվիրատուն որոշում է փորձաքննության օբյեկտը, ձեւակերպում է փորձաքննության խնդիրներն ու հարցերը, հաստատում փորձաքննություն իրականացնելու ժամկետը, վճարում է փորձաքննության դիմաց՝ փորձաքննության կազմակերպչին եւ փորձագետներին, քննարկում է ներկայացված փորձագիտական եզրակացությունները:

2. Փորձաքննության կազմակերպչի եւ փորձագետների միջեւ հարաբերությունները կարգավորվում են պայմանագրերով: Փորձաքննության կազմակերպիչն ապահովում է փորձագետների ընտրությունը, իրականացնում է փորձաքննության կազմակերպչաւթողական եւ նյութատեխնիկական ապահովւածությունը, ընդհանրացնում է փորձագետներից ստացած փորձագիտական տեղեկատւությունը եւ փորձագիտական եզրակացության տեսքով ներկայացնում փորձաքննության պատվիրատուին:

3. Փորձագետը փորձաքննություն է կատարում փորձաքննության կազմակերպչի կամ պատվիրատուի հետ կնքած պայմանագրի հիման վրա եւ արդյունքը ներկայացնում փորձագիտական եզրակացության կամ երաշխավորության տեսքով:

4. Փորձաքննության նյութերը, փորձագիտական երաշխավորություններն ու եզրակացություններն իրենցից ներկայացնում են գիտական եւ (կամ) գիտատեխնիկական արդյունք, որի նկատմամբ սեփականության իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, եթե փորձաքննության պատվիրատուի, կազմակերպչի եւ փորձագետների միջեւ կնքված պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 9. Փորձագիտական գործունեության հավատարմագրումը

1. Պետական փորձաքննության կազմակերպման գործունեությունը ենթակա է պարտադիր պետական հավատարմագրման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

2. Հավատարմագրումն իրականացվում է ըստ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բնագավառների եւ մասնագիտությունների:

3. Հավատարմագրման կարգը եւ չափանիշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի ներկայացմամբ:

4. Հավատարմագրումն իրականացնում է լիազոր մարմինը:

5. Հավատարմագրման հիմնական պայմաններն են՝

1) գիտական եւ գիտատեխնիկական գործունեության առնվազն երեք բնագավառներում ընդհանուր թվով առնվազն 30 փորձագետների առկայությունը.

2) գիտական եւ գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի փորձագետների առնվազն 75 տոկոսի համար վերջին հինգ տարում լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկում ներառված պարբերական գիտական հրատարակություններում առնվազն հինգ գիտական աշխատության առկայությունը.

3) գիտական եւ գիտատեխնիկական գործունեության առնվազն երեք բնագավառներում փորձագիտական գործունեության գիտամեթոդական նյութերի ապահովվածությունը:

6. Հավատարմագրման համար ներկայացված հայտը կարող է մերժվել միայն սույն հոդվածի 5-րդ մասում նշված պայմաններից առնվազն մեկի չբավարարման դեպքում:

7. Հավատարմագրի կամ դրանում նշված փորձաքննության բնագավառի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) Պարզվում է, որ հավատարմագիր ստանալու նպատակով ներկայացվել է կեղծ փաստաթղթեր.

2) իրականացվել է հավատարմագրում նշված փորձաքննության բնագավառին (բնագավառներին) չհամապատասխանող փորձաքննություն.

3) դիմում է ներկայացվել հավատարմագրի կամ դրանում նշված փորձաքննության բնագավառի գործողությունը դադարեցնելու խնդրանքով:

Հոդված 10. Փորձաքննություն կազմակերպելու կամ իրականացնելու պայմանագրերը

1. Փորձաքննության սուբյեկտների փոխհարաբերությունների կանոնակարգման հիմնական իրավաբանական փաստաթղթերն են՝

1) փորձաքննություն կազմակերպելու պայմանագիրը՝ փորձաքննության պատվիրատուի եւ կազմակերպչի միջեւ.

2) փորձաքննություն իրականացնելու պայմանագիրը՝ փորձաքննության պատվիրատուի եւ փորձագետների կամ փորձաքննության կազմակերպչի եւ փորձագետների միջեւ:

2. Փորձաքննություն կազմակերպելու կամ իրականացնելու պայմանագրերով սահմանվում են՝

1) պայմանագրի կողմերը.

2) փորձաքննության օբյեկտը.

3) փորձաքննություն իրականացնելու պայմանները, այդ թվում՝ փորձաքննության օբյեկտի գնահատման չափորոշիչների համակարգը.

4) կողմերի իրավունքները եւ պարտականությունները.

5) փորձաքննություն իրականացնելու ժամկետը.

6) փորձագիտական եզրակացության ուժը պահպանելու ժամկետը.

7) ֆինանսական պարտավորությունները.

8) փորձագիտական եզրակացության հավաստիության համար պատասխանատվությունը, այդ պատասխանատվությունն ուժի մեջ մնալու ժամկետը եւ կոնկրետ անձինք, որոնց վրա դրվում է ամբողջ փորձաքննության կամ դրա առանձին բաժինների վերաբերյալ պատասխանատվությունը.

9) փորձաքննության առանձնահատկությունից բխող այլ կարեւոր պայմաններ:

Հոդված 11. Փորձաքննության ֆինանսավորումը

1. Փորձաքննության ֆինանսավորման աղբյուրը որոշվում է փորձաքննության պատվիրատուի կողմից:

2. Պետական փորձաքննության իրականացումը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

3. Պետական մարմինների, պետական ոչ առևտրային կամ 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների պատվերով իրականացվող փորձաքննությունը կարող է ֆինանսավորվել այդ կազմակերպությունների բյուջետային միջոցների հաշվին՝ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման շրջանակներում:

Հոդված 12. Փորձագիտական եզրակացությունը

1. Պետական փորձաքննության փորձագիտական եզրակացությունն ունի պարտադիր բնույթ, ընդունվում է փորձաքննության պատվիրատուի կողմից եւ հաշվի է առնվում այն որոշումների ընդունման համար, որոնց հիմնավորման նպատակով իրականացվել է սվյալ փորձաքննությունը:

2. Հասարակական կամ մասնագիտական փորձաքննության փորձագիտական եզրակացությունն ունի երաշխավորական բնույթ եւ կարող է հաշվի առնվել համապատասխան որոշումների ընդունման ժամանակ:

3. Փորձագիտական եզրակացությունն ուժի մեջ է մտնում այն փորձաքննության պատվիրատուին տրամադրելու օրվան հաջորդող օրվանից եւ իր ուժը պահպանում է փորձաքննություն իրականացնելու պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում: Փորձագիտական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե դրա հիման վրա նախատեսվող գործողությունները չեն սկսվել փորձագիտական եզրակացությանն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

4. Շահագրգիռ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք իրավունք ունեն բողոքարկել (մասնակի կամ ամբողջությամբ) փորձագիտական եզրակացությունը՝ փորձաքննության

պատվիրատուին ներկայացնելով գրավոր դիմում՝ փորձագիտական եզրակացությունն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում: Փորձաքննության պատվիրատուն պարտավոր է մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրել ներկայացված դիմումը եւ հիմնավորված որոշում կայացնել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ՝ վերջինիս կցելով մերժումը հիմնավորող փաստաթուղթ:

5. Կրկնակի փորձաքննության փորձագիտական եզրակացությունը, որը համապատասխանում է հիմնական փորձաքննության եզրակացության հետ, վերջնական է:

6. Փորձագիտական եզրակացության վերաբերյալ վեճերը լուծվում են շահագրգիռ կողմերի փոխադարձ համաձայնությանը, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Հոդված 13. Փորձաքննության բնագավառում պետական կառավարումը

1. Փորձաքննության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) պետական միասնական քաղաքականության իրականացումը.

2) լիազոր մարմնի կարգավիճակի սահմանումը.

3) պետական փորձաքննության կազմակերպիչների գործունեության հավատարմագրման կարգի հաստատումը.

4) պետական փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգի հաստատումը.

5) պետական փորձաքննություն կազմակերպելու եւ իրականացնելու կարգի հաստատումը:

2. Լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) փորձաքննության բնագավառի իրավական ակտերի նախագծերի մշակումը.

2) փորձաքննության կազմակերպիչներին եւ փորձագետներին առաջադրվող պահանջների սահմանումը.

3) պետական հավատարմագրման կարգի եւ չափանիշների մշակումը.

4) պետական փորձաքննության մեթոդական եւ կազմակերպատեխնիկական հիմքերի մշակումն ու հաստատումը.

5) գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման ծրագրերի նախագծերի, ինչպես նաեւ ծրագրերի կատարման ընթացքի պետական փորձաքննության կազմակերպումը.

6) միջպետական պայմանագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող միջպետական գիտական եւ գիտատեխնիկական ծրագրերի նախագծերի, ինչպես նաեւ ծրագրերի կատարման ընթացքի պետական փորձաքննության կազմակերպումը.

7) փորձաքննության բնագավառում միջազգային պայմանագրերով նախատեսված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը.

8) փորձաքննության բնագավառում միջազգային համագործակցության պայմանագրերի կնքումը.

9) փորձաքննության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

Հոդված 14. Փորձաքննության բնագավառում իրավախախտումները

1. Փորձաքննության բնագավառում իրավախախտումներն են՝

1) առանց փորձաքննություն իրականացնելու որոշումների կայացումն այն դեպքերում, երբ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված է, որ նման փորձաքննության իրականացումը պարտադիր է.

2) փորձաքննություն իրականացնելուն խոչընդոտող գործողությունների կատարումը.

3) փորձաքննական գործընթացի ընթացքում փորձագետի կողմից ստացած տեղեկատվության գաղտնիության պահպանման սկզբունքի խախտումը:

Հոդված 15. Փորձաքննության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջի խախտումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված բազային տուրքի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի խախտումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված բազային տուրքի երկուհարյուրապատիկի չափով:

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ մասի պահանջի խախտումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված բազային տուրքի հարյուրապատիկի չափով:

4. Լիազոր մարմնի որոշմամբ նշանակված տուգանքը 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար հաշվարկվում է տույժ՝ գումարի 0,15 տոկոսի չափով:

5. Պատասխանատվության կիրառումը սահմանող վարույթն իրականացվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով եւ պայմաններով:

Հոդված 16. Փորձաքննության բնագավառում միջազգային համագործակցությունը

1. Փորձաքննության բնագավառում այլ երկրների հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

2. Փորձաքննության բնագավառի միջազգային պայմանագրերը կնքվում են միջպետական մակարդակի նախագծերի, ծրագրերի կամ այլ օբյեկտների համատեղ փորձաքննությունն իրականացնելու վերաբերյալ, կապված են փորձաքննության մեթոդաբանության, նորմատիվ հենքի ու ապահովվածության կատարելագործման եւ բարդ փորձագիտական խնդիրների համատեղ լուծման հետ:

3. Փորձաքննություն իրականացնելու պայմանագրերով կարող են նախատեսվել օտարերկրյա պետություններում գործունեություն իրականացնող փորձագետների եւ խորհրդատվական ընկերությունների կամ կազմակերպությունների ներգրավումը, եթե փորձաքննության առարկան չի պարունակում պետական գաղտնիք:

Հոդված 17. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Հավելված 2

Հաստատված է ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ-ԾՐԱԳՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի (այսուհետև՝ նպատակային ծրագրեր) ընտրության և հաստատման, դրանց իրականացման ծրագրերի (այսուհետև՝ առաջարկվող ծրագրեր) ընտրության, հաստատման և ֆինանսավորման (այսուհետև՝ նպատակային-ծրագրային ֆինանսավորում) կարգը:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում նպատակային-ծրագրային ֆինանսավորման համար հատկացումներ նախատեսվում են միայն սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանություն ստացած նպատակային ծրագրերի ֆինանսական նախահաշիվների հիման վրա, որոնք, որպես ծրագրերի իրականացման պատասխանատու ճանաչված պետական կառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետև՝ պատասխանատու մարմին) կողմից կազմվող բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում ու դրա անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

II. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼԸ

3. Նպատակային ծրագրերը գիտության և տեխնիկայի զարգացման ոլորտի գերակա ուղղությունների վերաբերյալ համալիր նախագծեր են, որոնք նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտամշակութային խնդիրների արդյունավետ լուծմանը, հասարակության կենսական պահանջները բավարարմանը, համաշխարհային շուկա մրցունակ արտադրանքի արտահանմանը:

4. Նպատակային ծրագրերը պետք է պարունակեն տեղեկություններ առաջարկվող ծրագրի արդիականության, նպատակների և խնդիրների, ծավալների ու դրանց իրականացման ժամկետների, ակնկալվող արդյունքների, ավարտական ձևերի մասին: Նպատակային ծրագրերը կարող են ունենալ ենթածրագրեր:

5. Նպատակային ծրագրերը կարող են լինել կարճաժամկետ՝ 1-2 տարի, և երկարաժամկետ՝ մինչև հինգ տարի: Նպատակային ծրագրերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետներն ու առաջադրանքները,

տեխնիկատնտեսական ցուցանիշները և ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով, որոնք ըստ տարիների ենթակա են ճշգրտման յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացում:

6. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան մշակում ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետև՝ նախարարություն) ու Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կողմից սահմանված կարգով նախարարություն են ներկայացնում այդ մարմինների կողմից կարգավորվող ոլորտներում գիտության և տեխնիկայի բնագավառին առնչվող համալիր ծրագրերի նախագծերը:

7. Նախարարությունն ամփոփում է նշված ծրագրերի նախագծերը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, ու դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տալիս այդ ծրագրերի նախագծերին՝ սահմանելով դրանց պատասխանատու մարմինները: Նպատակային ծրագրերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ օրենք) ամենամյա քննարկման ժամանակ:

III. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Հաստատված նպատակային ծրագրերի իրականացման նպատակով պատասխանատու մարմնի (մարմինների) կողմից, որպես կանոն, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ անցկացվում է բաց մրցույթ՝ 2 փուլով:

9. Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են պատասխանատու մարմնի, նախարարության, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչները, ինչպես նաև, պատասխանատու մարմնի հայեցողությամբ, բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ և գիտնականներ:

10. Մրցույթի հայտը, բացի մրցույթի հրավերով սահմանված տեղեկություններից, պետք է պարունակի տեղեկություններ ծրագրի անվանման, առաջատար կազմակերպության, նախագծի ղեկավարի, կատարողների կազմի, առաջադրանքների կատարման նախադրյալների և ուղիների, ավարտական ձևերի ու դրանց նշանակության, տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին:

11. Մրցութային հանձնաժողովը, մրցութային հայտերը քննարկելիս, գնահատում է առաջարկվող ծրագրերի համապատասխանությունը տվյալ ծրագրի նպատակներին, խնդիրներին և առաջադրանքներին, վերլուծում առաջարկվող ծրագրերի իրականացման

նախադրյալները (կադրային կազմ, նյութատեխնիկական բազա) և ուղիները, ավարտական ձևերն ու տեխնիկատնտեսական ցուցանիշները:

IV. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

12. Պատասխանատու մարմինները «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, օրենքում ներառված ծրագրերի շրջանակներում, այդ ծրագրերի իրականացման նպատակով ընտրված ծրագրերի հեղինակների (ընտրված մասնակիցների) հետ կնքում են պայմանագրեր:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված պայմանագրերում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են համապատասխան ծրագրի անվանումը, առաջատար կազմակերպությունը, ծրագրի իրականացման ժամկետները և պայմանները, ֆինանսավորման չափը, ինչպես նաև հաշվետվության ձևերը, ծրագրի վերջնական կատարողական ակտերը ներկայացնելու ժամկետները և արդյունքների գնահատման կարգը:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Կազմվում են ծրագրերի իրականացման մասին ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ: Ընտրված ծրագրերն իրականացնող հեղինակներն առաջատար կազմակերպությունների երաշխավորությամբ համապատասխան պատասխանատու մարմիններ են ներկայացնում հաշվետվություններ՝ դրանց կողմից սահմանված կարգով: Հաշվետվությունները ներկայացնելու ժամկետներ են սահմանվում՝

ա) ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների համար՝ տարվա ավարտից հետո 10 օրվա ընթացքում,

բ) ամփոփիչ հաշվետվությունների համար՝ ծրագրի իրականացման ժամկետի ավարտից հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում:

15. Հաշվետվությունները քննարկելիս գնահատվում են ծրագրի իրականացման ամբողջական և առանձին փուլերի արդյունքների, դրանց համապատասխանությունն առաջադրանքներին, միջոցների օգտագործման արդյունավետությունը:

16. Պատասխանատու մարմիններն ամփոփ տեղեկություններ են ներկայացնում նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով: Նախարարությունն ամփոփում է նշված տեղեկությունները և անհրաժեշտության դեպքում կազմում երաշխավորություններ՝ գիտական և գիտատեխնիկական նպատակային նոր ծրագրերի մշակման համար:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՏԻՆԱՆՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է գիտնականների և գիտահետազոտական խմբերի (կոլեկտիվների) նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված գիտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական, հետախուզական հետազոտությունների, մշակումների, աշխատանքների, նախագծերի (այսուհետև՝ գիտական թեմաների հայտեր) իրականացման՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում թեմատիկ ֆինանսավորման համար հատկացումներ նախատեսվում են միայն մրցութային կարգով ընտրված ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետև՝ նախարարություն) կողմից հաստատված գիտական թեմաների հայտերի ֆինանսական նախահաշիվների հիման վրա, որոնք, որպես նախարարության կողմից կազմվող բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում և դրա անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ մինչև բյուջետային գործընթացն սկսելը:

II. ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

3. Նախարարությունը գիտական թեմաների հայտերի ընտրության և հաստատման նպատակով կազմակերպում է մրցույթ՝ սույն կարգի պահանջներին համապատասխան: Հայտերի գնահատման նպատակով նախարարության կողմից սահմանված կարգով ձևավորվում են մասնագիտական փորձագիտական խորհուրդներ (այսուհետև՝ խորհուրդ): Նախարարության կողմից ընդունվում և խորհուրդներին են տրամադրվում գիտական թեմաների հայտերը (այսուհետև՝ մրցույթի հայտեր): Խորհուրդները փորձաքննության են ենթարկում, ընտրում գիտական թեմաների հայտերը և դրանք ներկայացնում նախարարություն՝ հաստատման: (3-րդ կետը փոփ. 08.08.02 N 1185-Ն) 4. Նախարարությունը մրցույթի մասին հայտարարությունը հաստատում և հրապարակում է զանգվածային լրատվությամբ՝ գիտական թեմաների հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Մրցույթի հայտարարությունը պարունակում է համառոտ տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի ու կարգի՝ մրցույթին մասնակցելու հիմնական պայմանների, այդ թվում նաև մրցույթի հրավեր

ստանալու պայմանների ու գիտական թեմաների հայտերը կազմելու և ներկայացնելու կարգի մասին:

5. Նախարարությունը մրցույթի հրավերը հաստատում է և տրամադրում մրցույթի հրավեր ստանալու գրավոր պահանջ ներկայացրած անձին՝ նման պահանջ նախարարություն մուտքագրվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի հրավերի պատճենահանման և առաքման ծախսերը ֆինանսավորվում են մրցույթի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձի հաշվին:

6. Մրցույթի հրավերը պետք է պարունակի՝

ա) հղում՝ հրապարակված մրցույթի մասին հայտարարությանը՝ ի լրումն որի տրամադրվում է տվյալ մրցույթի հրավերը,

բ) մրցույթի հայտերի պատրաստման հրահանգները,

գ) մրցույթի մասնակիցներից (այսուհետև՝ մասնակից) պահանջվող նրակավորման տվյալների չափանիշները և դրանց գնահատման կարգը,

դ) թեմաներին ներկայացվող հիմնական պայմանները,

ե) մրցույթի հայտի ֆինանսական նախահաշվի կազմման ձևը,

զ) մրցույթի հայտերը ներկայացնելու պայմանները, ներառյալ՝ ձևը, տեղը, ժամկետը, մրցույթի հայտի լեզուն,

է) այն եղանակները, որոնցով մասնակիցները կարող են պահանջել մրցույթի փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ և մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին տեղեկատվություն,

ը) մրցույթի հայտերի բացման օրը և ժամը, քննարկման ու գնահատման կարգը,

թ) նախարարության կամ խորհրդի գործողությունները կամ որոշումները, մասնակցի բողոքարկելու իրավունքի պարզաբանումները,

ժ) տեղեկատվություն՝ նախարարության կամ խորհրդի կողմից մրցույթի հայտերը մերժելու հիմքերի վերաբերյալ,

ժա) մրցույթի հայտերը նախապատրաստելուն և ներկայացնելուն վերաբերող այլ տեղեկատվություն՝ նախարարության հայեցողությամբ:

7. Մրցույթի հայտը ներկայացվում է մրցույթի հրավերով սահմանված կարգով: Մրցույթի հրավերով սահմանված տեղեկություններից բացի, մրցույթի հայտը ընդգրկում է

տեղեկություններ՝

ա) թեմայի և դրա ղեկավարի, գիտական հաստատության կամ բուհի, ինչպես նաև թեմայի իրականացման աշխատանքներում ընդգրկվող մասնակիցների վերաբերյալ: Փորձարարական բնույթի թեմաների հայտերում ընդգրկվող հաստիքների նվազագույն թիվը սահմանվում է 5-ը,

բ) ներկայացվող թեմայի հիմնավորման նպատակի խնդիրների, ակնկալվող արդյունքների, խնդրի լուծման ուղիների և թեմայի կատարման ժամկետների, դրա կատարման նպատակով առկա և ձեռք բերվող սարքավորումների, նյութերի, միջոցների ու դրա համար անհրաժեշտ գումարների մասին: Կարող են նախատեսվել արշավախմբերի կազմակերպում և գիտագործնական միջոցառումների անցկացում: Թեմաների կատարման ժամկետները, որպես կանոն, նախատեսվում են մինչև 3 տարի:

8. Խորհուրդը նախարարության սահմանած կարգով փորձաքննության է ենթարկում ներկայացված յուրաքանչյուր հայտը և եզրակացություն տալիս դրա հաստատման նպատակահարմարության վերաբերյալ: Խորհուրդը հայտերի փորձաքննության ժամանակ գնահատում է ներկայացված հայտը՝ գիտական կամ գիտատեխնիկական նորույթը, վերլուծում թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը և դրա իրականացման ժամկետները, ֆինանսական արդյունավետությունը: Խորհուրդները կարող են մշակել և օգտագործել տվյալ թեմային բնորոշ հայտերի գնահատման լրացուցիչ չափանիշներ:

9. Խորհուրդը ներկայացված բոլոր հայտերի վերաբերյալ եզրակացությունները հաստատելուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դրանք ներկայացնում է նախարարություն՝ հայտերի վերջնական ընտրության համար: Նախարարությունը, ելնելով տվյալ տարվան հաջորդող տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծով թեմատիկ ֆինանսավորման համար նախատեսվող հատկացումների առավելագույն չափից և ներկայացված թեմաների գծով ուսումնասիրությունների կատարման նպատակահարմարությունից, հաստատում է այն թեմաների ցանկը, որոնց ծախսերի նախահաշիվները ներառվելու են նախարարության կողմից պատրաստվող տվյալ տարվան հաջորդող տարվա բյուջետային ֆինանսավորման հայտում: Բյուջետային ֆինանսավորման հայտում կարող են ներառվել միայն խորհրդի դրական եզրակացությունն ստացած թեմաները:

10. Խորհուրդների բացասական եզրակացության մասին տեղեկացվում է թեմայի ղեկավարին (հեղինակին): Խորհրդի եզրակացությունը կարող է բողոքարկվել նախարարությունում՝ թեմայի ղեկավարի (հեղինակի) կողմից՝ վերջինիս տեղեկացնելուց հետո 15 օրվա ընթացքում: Խորհուրդը նախարարության ներկայացմամբ տալիս է կրկնակի եզրակացություն: Եզրակացության հիման վրա նախարարության ընդունած որոշումը վերջնական է:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԹԵՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

11. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հաստատումից հետո, բյուջեով թեմատիկ ֆինանսավորման

համար նախատեսված հատկացումների շրջանակներում, նախարարությունը հաստատում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին թեմատիկ ֆինանսավորման գծով ֆինանսավորվող թեմաների ցանկը և դրանց ղեկավարների ցուցակը, ինչպես նաև յուրաքանչյուր թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը:

12. Նախարարությունը սույն կարգի 11-րդ կետում նշված ցանկը և ցուցակը հաստատելուց հետո, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, նշված ցանկում ընդգրկված թեմաների ղեկավարների հետ կնքում է պայմանագրեր: Ընդ որում, նախարարությունը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատու ստորաբաժանման իրավասությունը վերապահում է տվյալ թեմայի հաստատման մասին դրական եզրակացություն ներկայացրած խորհրդին: Թեմայի ղեկավարի և մասնակիցների միջև հարաբերությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

(12-րդ կետը փոփ. 15.04.02 N 399, 08.08.02 N 1185-Ն)

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված պայմանագրերում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, պարտադիր կարգով նշվում են նաև համապատասխան թեմաների անվանումները, դրանց ղեկավարների ազգանունները, գիտական կազմակերպության կամ բուհի անվանումը, որտեղ պետք է իրականացվի թեման, թեմայի իրականացման ժամկետներն ու պայմանները, ֆինանսավորման չափը, ինչպես նաև հաշվետվության ձևերը, թեմայի վերջնական կատարողական ակտերի ներկայացման ժամկետները, թեմայի արդյունքների գնահատման կարգը:

14. Գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և թեմայի ղեկավարի հարաբերությունները կարգավորվում են առանձին պայմանագրով, որտեղ նշվում է տնօրենը (ռեկտորի) իրավասությանը թողնված թեմայի ֆինանսավորման տոկոսը: Այդ գումարով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

IV. ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

15. Թեմաների իրականացման մասին կազմվում են ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ, որոնց ներկայացնելու ժամկետները սահմանվում են նախարարության կողմից՝ թեմայի իրականացման ժամկետի ավարտից առնվազն 20 օր առաջ:

16. Նախարարությունն ընդունում, հաշվառում է հաշվետվությունները և դրանք արտադրում համապատասխան փորձագիտական խորհուրդներին: Գիտական

կազմակերպություններում աշխատող գիտնականների թեմաների հաշվետվությունները ներկայացվում են անմիջապես ղեկավարների կամ կատարողների կողմից:

17. Թեմաների շարունակման նպատակահարմարությունը որոշելու, ինչպես նաև ավարտվող աշխատանքների վերջնական արդյունքները վերլուծելու, դրանց ներդրումը և կիրառումը երաշխավորելու հնարավորությունները պարզելու համար հաշվետվությունները գնահատվում են փորձագիտական խորհուրդներում՝ նախարարության կողմից սահմանված ժամկետներին և չափանիշներին համապատասխան, և հաստատվում նախարարության կողմից:

18. Հաշվետվությունների գնահատման ժամանակ հաշվի են առնվում արդյունքների նորույթը և դրանց նշանակությունը, հրատարակումների կամ այլ վերջնական արդյունքներում կատարողների ներգրավվածության աստիճանը: Եզրակացության մեջ հատուկ նշվում է թեմայի շարունակության նպատակահարմարությունը:

Հաստատված է ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶՄՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման գծով պետական ծրագրերի (այսուհետև՝ ծրագրեր) հաստատման ու ֆինանսավորման (այսուհետև՝ բազային ֆինանսավորում) կարգը:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում բազային ֆինանսավորման համար հատկացումներ նախատեսվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրերի հիման վրա: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետև՝ նախարարություն) նշված ծրագրերի նախագծերի ֆինանսական նախահաշիվները (առանձնացված ըստ համապատասխան պետական կառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, այսուհետև՝ պատասխանատու մարմիններ), որպես բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում և դրա անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հաջորդ

տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

II. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՍՏԱՏԵԼԸ

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան մշակում և նախարարության կողմից սահմանված կարգով վերջինիս են ներկայացնում իրենց կողմից կարգավորվող ոլորտներում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման ծրագրերի նախագծեր:

Հիմնարար հետազոտությունների ծրագրերի նախագծերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի կարծիքի հետ միասին, որը տրվում է նախարարության և Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի կողմից սահմանված կարգով:

4. Նշված ծրագրերի նախագծերը պետք է պարունակեն տեղեկություններ առաջարկվող ծրագրերի արդիականության, նպատակների և խնդիրների, կատարման ժամկետների ու ծավալների, ակնկալվող արդյունքների, ավարտական ձևերի (հաշվետվություն, արտոնագրեր, ներդրման հաշվետվություն) և ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:

5. Նախարարությունն իր սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների փորձաքննությունն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհուրդների ձևավորման կարգին համապատասխան ստեղծված փորձագիտական խորհուրդների միջոցով (այսուհետև՝ խորհուրդ) փորձաքննության է ենթարկում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրերի նախագծերը: Դրական եզրակացություն ստացած նախագծերը նախարարության կողմից սահմանված կարգով ամփոփվում և ներկայացվում են պատասխանատու մարմիններին:

6. Նախարարությունը, իր սահմանած կարգով, պատասխանատու մարմիններից ստանում և ամփոփում է գիտական ու գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի նախագծերը:

7. Գիտական կադրերի պատրաստման ծրագրերը մշակվում և իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգի:

8. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների և դրանց պատասխանատու պետական մարմինների ցանկը կազմվում է նախարարության կողմից Հայաստանի

Հանրապետության ազգային ակադեմիայի հետ համատեղ ու ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

9. Ամփոփված ծրագրերի նախագծերն ու դրանց ֆինանսական նախահաշիվները նախարարության կողմից բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ՝ հաջորդ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում ընդգրկելու նպատակով և ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

III. ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՆ ՈՒ ԴՐԱՆՔ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

10. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո, օրենքում ընդգրկված ծրագրերի իրականացման համար պատասխանատու մարմիններն իրենց համակարգի համապատասխան գիտական կազմակերպությունների հետ կնքում են պայմանագրեր:

11. Պայմանագրերում նշվում են համապատասխան ծրագրերի անվանումները, դրանց իրականացման ժամկետները, ֆինանսավորման չափը, պայմանները և ժամկետները, ինչպես նաև հաշվետվության ձևերը, ծրագրի վերջնական կատարողական ակտերի ներկայացման ժամկետները և արդյունքների գնահատման կարգը:

12. Պայմանագրերով նախատեսված հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններն իրականացվում են գիտական կազմակերպությունների ստորաբաժանումների միջոցով (բաժին, լաբորատորիա, կայան և այլն), որոնցում աշխատանքի ընդունումն ու աշխատանքից ազատումը կատարվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության համաձայն:

13. Կնքված պայմանագրերի ֆինանսավորումն ըստ ամիսների իրականացվում է հետևյալ կարգով՝ գիտական կազմակերպությունը պայմանագրի կողմ հանդիսացող պատասխանատու մարմին է ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է պայմանագրի շրջանակներում գիտական կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ: Պայմանագրի կողմ հանդիսացող պատասխանատու մարմինն ստուգում ու ամփոփում է նշված հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

14. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորում հատկացվում է պայմանագրային հիմունքներով՝ որպես օգտագործման հանձնված գույքի պահպանման ծախս:

15. Պատասխանատու մարմինները տարեկան հաշվետվությունները ներկայացնում են նախարարություն՝ ծրագրի կատարումն ամփոփելու և հաջորդ տարվա առաջարկությունները մշակելու համար: Նախարարությունը հիմնարար հետազոտությունների հաշվետվությունները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիա՝ գիտական արդյունքների համակարգման համար:

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N _____

Փորձագիտական ծառայություն մատուցելու մասին

ք. Երևան

‘ _____ ’

2013

թ. _____

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն՝ ի դեմս Կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի (այսուհետ՝ Պատվիրատու),

և _____

(ծնված _____

բնակվող՝ _____

_____ հասցեում, անձնագիր N _____, տրված _____ կողմից _____ թ., սոցիալական քարտ N _____)

մյուս կողմից (այսուհետ՝ Կատարող), այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և ժամկետը

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Փորձագիտական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված պայմանագրի գինը:

2. Ծառայության հանձնում-ընդունում

2.1 Ծառայության հանձնում-ընդունումը կատարվում է հանձնման-ընդունման ակտի միջոցով: Ծառայությունը համարվում է մատուցված համապատասխան հանձնման-ընդունման ակտը Պատվիրատուի կողմից ստորագրելու պահից:

2.2 Պատվիրատուն պարտավոր է Ծառայության մատուցման հետ կապված բոլոր առարկությունները Կատարողին հայտնել ոչ ուշ, քան համապատասխան հանձնման-ընդունման ակտի ներկայացման օրվանից տասն օրվա ընթացքում՝ գրավոր ձևով: Նշված ժամկետում հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ստորագրված չվերադարձնելու կամ գրավոր առարկություն չներկայացնելու դեպքում ծառայությունը համարվում է ընդունված:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ (ներառյալ եկամտային հարկը):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտն ստորագրելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում Ծառայության մատուցման համար նախատեսված դրամական միջոցները փոխանցում է Կատարողի հաշվարկային հաշվին: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող Կատարողների դրամական միջոցները փոխանցվում են տարադրամով:

4. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

4.1 Կատարողն իրավունք ունի՝

4.1.1 Ծառայության մատուցումն իրականացնել ինքնուրույն և ազատ,

4.1.2 Պատվիրատուից պահանջել վճարում կատարել սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

4.2 Կատարողը պարտավոր է՝

4.2.1 Ծառայությունը մատուցել պատշաճ մակարդակով՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգով եւ Պատվիրատուի կողմից մշակված մեթոդաբանությամբ,

4.2.2 Չհրապարակել եւ չտարածել Ծառայության մատուցման ընթացքում հայտնի դարձած, գաղտնիք պարունակող տեղեկությունները,

4.2.3 Ծառայությունը մատուցել Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում՝ ներկայացնելով փորձագիտական եզրակացություն,

4.2.4 Հրաժարվել Ծառայության մատուցումից դրա անաչառության վրա ազդող գործոնների առկայության դեպքում՝ այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին,

4.2.5 Պատվիրատուի գրավոր առարկությունը ստանալուց հետո, ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, վերացնել տեխնիկական թերությունները եւ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

4.3.1 Պահանջել Ծառայության մատուցումը պատշաճ մակարդակով եւ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում,

4.3.2 Կատարողի կողմից Ծառայությունը ոչ պատշաճ մատուցելու դեպքում Կատարողից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնելու թերությունները կամ Կատարողից պահանջել հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը:

4.4 Պատվիրատուն պարտավոր է՝

4.4.1 Չմիջամտել Կատարողի կողմից Ծառայության մատուցմանը,

4.4.2 Պահպանել Կատարողի անձի մասին գաղտնիությունը և այն բացահայտել միայն Կատարողի գրավոր համաձայնությամբ,

4.4.3 Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունը մատուցելուց հետո ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել Կատարողական ակտը կամ գրավոր ներկայացնել առարկությունները:

5. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը և կարգը

5.1 Կողմերից յուրաքանչյուրը իրավասու է վաղաժամկետ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե մյուս կողմը խախտում է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

6.1 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են անմիջական բանակցությունների միջոցով, իսկ ընդհանուր հայտարարի չգալու դեպքում՝ դատական կարգով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից և նախատեսված տույժի վճարումից, եթե պայմանագրային պարտականությունների կատարումն անհնարին է դառնում կողմերի կամքից անկախ՝ անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Սույն պայմանագրի համաձայն Կողմերը Ֆորս-մաժորային իրավիճակներ են համարում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավիճակները:

7.2 Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրային պարտավորությունները չկատարող Կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս կողմին գրավոր տեղեկացնել անհաղթահարելի ուժի առկայության և պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև անհաղթահարելի ուժի ազդեցության վերացման մասին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման պահից:

8.2 Սույն Պայմանագրով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

8.3 Սույն Պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր: Այդ փոփոխությունների ու լրացումների մասին համաձայնագիրը կցվում է սույն Պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները.

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտե ք. Երևան, Օրբելի եղբ. 22 թիվ 1 գանձապետարան Հ/Հ 900011033033	անուն, ազգանուն _____ հասցե՝ _____ _____ հեռախոս՝ _____ Հ/Հ _____ _____
Կոմիտեի նախագահ՝ Ս. Հարությունյան	Բանկի անվանումը _____ _____
----- (ստորագրություն)	----- (ստորագրություն)

2013-15 թթ. պայմանագրային (թեմատիկ) նախագծերի մրցույթ

ՀՀ ԿԳՆ

գիտության պետական կոմիտե, 2013 թ.

Փորձագիտական եզրակացություն, հայտ

Ղեկավարի ազգանունը

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	<i>Գերազանց: Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:</i>
4	<i>Շատ լավ: Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:</i>
3	<i>Լավ: Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:</i>
2	<i>Միջին: Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:</i>
1	<i>Վատ: Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:</i>
0	<i>Շատ վատ: Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:</i>

Հարցաշար

1.	Նպատակներ: Որքանո՞վ են արժեքավոր հետազոտության նպատակները:	
2.	Արդիականություն: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	Նորույթ: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	Իրագործելիություն: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող ժամանակահատվածում հետազոտության նպատակներին հասնելը:	

5.	Ծրագիր: Որքան՞ հստակ է ձևակերպված գիտական ծրագիրը:	
6.	Համապատասխանություն: Որքանո՞վ է գիտական ծրագիրը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
7.	Իրականացում: Որքանո՞վ է իրատեսական գիտական ծրագրի իրականացումը:	
8.	Առնչությունն այլ բնագավառների հետ: Որքանո՞վ է գիտական ծրագրի իրականացումը նպաստում տվյալ կամ հարակից բնագավառների առաջընթացին:	
9.	Կարևորություն: Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական իր արդյունքների հնարավոր կիրառություններով (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, սիստեմների և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	Միջազգային համագործակցություն: Որքանո՞վ է գիտական ծրագրի իրականացումը նախատեսում միջազգային համագործակցություն:	
11.	Իրականացման մեթոդներ: Որքանո՞վ են գիտական ծրագրում ներկայացված մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
12.	Իրականացման փուլեր: Որքանո՞վ են համապատասխանում գիտական ծրագրի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն:	
13.	Իրականացման փուլերի վերահսկելիություն: Որքանո՞վ է իրատեսական գիտական ծրագրի իրականացման փուլերի վերահսկելիությունը:	
14.	Մարդկային ներուժ: Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
15.	Տեխնիկական ապահովվածություն: Որքանո՞վ է բավարար առկա և (կամ) ձեռքբերվելիք տեխնիկական միջոցները գիտական ծրագրի իրականացման համար:	
16.	Արդյունքների տնօրինում: Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	

17.	Նախահաշիվ: Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
Փորձագետի ընդհանուր գնահատական		

Փորձագետի մեկնաբանություններ (ծավալը չի սահմանափակվում)

Հետազոտության նպատակների մեկնաբանություն (հարցաշարի 1-4 կետերը):
Գիտական ծրագրի մեկնաբանություն (հարցաշարի 5-10 կետերը):
Գիտական ծրագրի իրականացման մեկնաբանություն (հարցաշարի 11-17 կետերը):

Փորձագետ _____

Ամսաթիվ _____

(ազգանուն, անուն)

(ստորագրություն)

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցող գիտահետազոտական խմբերի ղեկավարների և կատարողների մասնագիտական որակավորման գնահատման

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցող գիտահետազոտական խմբերի ղեկավարների և կատարողների մասնագիտական որակավորման գնահատումը (այսուհետ՝ գնահատում) կատարվում է այդ մրցույթի շրջանակներում ձևավորված գիտական փորձաքննություն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից:

Գնահատման համար հիմք են հանդիսանում գիտահետազոտական խմբի և կատարողների (բացառությամբ երիտասարդ մասնագետի, եթե նա բակալավրիատի 4-րդ կամ մագիստրատուրայի կամ ասպիրատուրային 1, 2-րդ տարվա ուսանող է) գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գիտաչափական տվյալները՝ ըստ գիտական աշխատողների գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության 1-ն կետի 1-3 ենթակետերի գումարի՝

1) **Գրախոսվող գիտական ամսագրերում ունեցած հրապարակումների:** *Գիտական ամսագիր՝ Web of Knowledge, Scopus, Springer, Astrophysics, PubMed, Mathematics, Chemical Abstracts, Agris, GeoRef միջազգային գիտատեղակատվական շտեմարաններում (այսուհետ՝ ՄԳՇ), ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՂ-ի ցանկում ընդգրկված ամսագիր, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագիր:*
Յուրաքանչյուր հոդվածի համար՝

IF - ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակից (ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

A = 1,0 - հոդված՝ 0,15 և բարձր ԱԳ ունեցող ամսագրում,

A = 0,15 - հոդված՝ 0,15-ից ցածր ԱԳ, ինչպես նաև ԱԳ չունեցող, բայց ՄԳՇ, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՂ-ի ցանկում ընդգրկված ամսագրում,

A = 0,1 - հոդված՝ արտերկրում հրատարակված և ՄԳՇ, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՂ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում,

A = 0,05 – հողված՝ ՀՀ-ում հրատարակված և ՄԳՇ, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՆՀ-ի ցանկում չընդգրկված, քայց գրախոսվող և մատենագրվող ամսագրում,
W - համահեղինակների քանակով որոշվող գործակից¹⁹,
C - հղումների քանակով որոշվող գործակից²⁰:

$$E_1 = \sum A \times IF \times W \times C, \text{ եթե } U\Phi (IF) \geq 0,15, E_1 = \sum A \times W \times C, \text{ մնացած դեպքերում:}$$

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտամեթոդական ձեռնարկների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրատարակումների: Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, գիտամեթոդական ձեռնարկ, նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված և ISBN ունեցող հրատարակում:

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտամեթոդական ձեռնարկի կամ նյութերի ժողովածուի համար՝

B = 0,2 - օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

B = 0,15 - հայերեն լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

B = 0,1 - գիտամեթոդական ձեռնարկ կամ օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,

B = 0,05 - հայերեն լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,

PSh - ծավալ (տպագրական մամուլ, 16 էջ),

N - համահեղինակների քանակ:

$$E_2 = \sum B \times PSh / N, \text{ 10-ից ավել համահեղինակների դեպքում՝ } N = 10:$$

Հոդվածների ժողովածուի յուրաքանչյուր հոդվածի համար՝

BA = 0,1 – օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,

BA = 0,05 – հայերեն լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,

W - համահեղինակների քանակով որոշվող գործակից,

¹⁹ W-ն որոշվում է հետևյալ կերպ.

Համահեղինակների թիվը	1-4	5-9	10-19	20-49	50-99	100-199	200-499	500-999	1000-1999	2000+
W	1	0,75	0,56	0,42	0,32	0,24	0,18	0,13	0,10	0,08

²⁰ C-ն որոշվում է հետևյալ կերպ.

Հղումների թիվը	0-1	2-4	5-9	10-19	20-49	50-99	100-199	200-499	500-999	1000+
C	1	1,025	1,05	1,1	1,15	1,5	2	2,5	5	10

C - հղումների քանակով որոշվող գործակից:

$$E_2 = \sum BA \times W \times C:$$

3) **Գիտաժողովների մասնակցության²¹:**

Յուրաքանչյուր զեկույցի կամ գիտաժողովի նյութերում («Proceedings») հրատարակման համար՝

Հրավիրված զեկույց՝

T = 1,0 - արտերկրում տեղի ունեցած գիտաժողով,

T = 0,75 - ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողով:

Բանավոր զեկույց՝

T = 0,2 - արտերկրում տեղի ունեցած գիտաժողով,

T = 0,15 - ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողով,

W - համահեղինակների քանակով որոշվող գործակից,

C - հղումների քանակով որոշվող գործակից:

$$E_3 = \sum T \times W \times C:$$

Գիտաժողովի նյութերում հրատարակում

P = 0,1 – արտերկրում տեղի ունեցած գիտաժողով,

P = 0,05 – ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողով,

W - համահեղինակների քանակով որոշվող գործակից,

C - հղումների քանակով որոշվող գործակից:

$$E_3 = \sum P \times W \times C:$$

Գնահատման ընդհանուր գնահատականը 1)-ից 3)-րդ ենթակետերի գումարն է՝

$$E = \sum_{i=1}^3 E_i:$$

Գնահատվումը կատարվում է ըստ՝

✓ գիտահետազոտական խմբի ղեկավարի գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գիտաչափական տվյալների, տարիքի և Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթային ծրագրերի ղեկավարման՝ առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ),

✓ գիտահետազոտական խմբի կատարողների (բացառությամբ ղեկավարի և մեկ երիտասարդ մասնակցի) գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների

²¹ Գիտաժողովների թեզիսները (դրույթները - «Abstracts») և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները («Posters») չեն գնահատվում:

գիտաչափական տվյալների (նորմավորված մեկ կատարողի հաշվարկով) և միջին տարիքի՝ առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ): Եթե գիտահետազոտական խումբը (ներառյալ ղեկավարը) բաղկացած է երկու անդամից, ապա կատարողը գնահատվում է և որպես կատարող և որպես երիտասարդ մասնակից,

✓ գիտահետազոտական խմբի մասնակից մեկ երիտասարդի մասնագիտական համապատասխանության գիտական թեմայի հետազոտության ուղղությանը (եթե նա բակալավրիատի 4-րդ կամ մագիստրատուրայի կամ ասպիրատուրայի 1,2-րդ տարվա ուսանող է) կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գիտաչափական տվյալների (եթե նա ասպիրատուրայի 3-րդ կուրսի ուսանող է կամ բակալավրիատը կամ մագիստրատուրան կամ ասպիրատուրան ավարտած մասնագետ է) առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ):

Գիտահետազոտական խմբի ղեկավարի գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գնահատումը:

Գնահատումն իրականացվում է 2008-2012թթ. համար՝ ըստ ԳՊԿ բանկում ունեցած տվյալների, իսկ այդպիսիների բացակայության դեպքում՝ ըստ հայտում բերված: աշխատանքների: Գնահատումն կատարվում է ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի/մասնագիտության²² մասնակից գիտահետազոտական խմբերի ղեկավարների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գիտաչափական գնահատականների (*E*) բաշխման միջինից ունեցած տարբերության: Միջինին հատկացվում է 3.0 միավոր, նրանից “մեկ սիգմա” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 3.5 (2.5), “երկու սիգմա” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 4.0 (2.0), “երեք” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 4.5 (1.5), “չորս և ավելի սիգմա” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 5.0 (1.0): Եթե գիտահետազոտական խմբի ղեկավարի տարիքը փոքր է 35-ից, ապա նրա գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գիտաչափական գնահատականը (*E*) բազմապատկվում է 1.5-ով: Եթե գիտահետազոտական խմբի ղեկավարը թեմայի իրականացման ժամանակահատվածում առնվազն մեկ տարվա ընթացքում հանդիսանալու է նաև Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցութային մեկ (երկու և ավելի) ծրագրի ղեկավար, ապա նրա գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գիտաչափական գնահատականը (*E*) բազմապատկվում է 0.75 (0.5)-ով:

²² Բնական գիտությունների բնագավառը բաժանվում է մասնագիտությունների: Ճարտարագիտություն և տեխնոլոգիա բնագավառը բաժանվում է երկու մասի՝ առանձնացվում է Քաղաքաշինություն և ճարտարապետություն մասնագիտությունը, իսկ մնացածները քննարկվում են որպես մեկ ամբողջություն: Բժշկական գիտություններ, Գյուղատնտեսական գիտություններ, Հասարակական գիտություններ, Հայագիտություն և հումանիտար գիտություններ բնագավառներից յուրաքանչյուրը քննարկվում է որպես մեկ ամբողջություն:

Գիտահետազոտական խմբի (ներառյալ խորհրդատուն) կատարողների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների գնահատումը:

Գնահատումն իրականացվում է ըստ հայտում բերված 5 աշխատանքների կամ, եթե հայտում բերված են 5-ից ավելի աշխատանքներ, ապա ընտրվում են գիտաչափական տվյալներով 5 լավագույնները: Գնահատումն կատարվում է ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի/ մասնագիտության մասնակից գիտահետազոտական խմբերի կատարողների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների միջին (նորմավորված տվյալ խմբի կատարողների թվով)

գիտաչափական գնահատականների (\bar{E}) բաշխման միջինից ունեցած տարբերության: Միջինին հատկացվում է 3.0 միավոր, նրանից “մեկ սիգմա” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 3.5 (2.5), “երկու սիգմա” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 4.0 (2.0), “երեք” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 4.5 (1.5), “չորս և ավելի սիգմա” բարձր (ցածր) միջակայքի դեպքում՝ 5.0 (1.0): Եթե գիտահետազոտական խմբի կատարողների միջին տարիքը փոքր է 35-ից, ապա կատարողների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների միջին գիտաչափական գնահատականը (\bar{E}) բազմապատկվում է 1.5-ով:

Գիտահետազոտական խմբի մասնակից մեկ երիտասարդի մասնագիտական համապատասխանության գնահատումը:

Նվազագույն գնահատականը սահմանվում է 2 միավոր (մրցույթի տեխնիկական պահանջների բավարարման համար), իսկ դրանից բարձր գնահատվում է ըստ երիտասարդ մասնակցի մասնագիտության և գիտական թեմային ուղղվածության համապատասխանության: Եթե երիտասարդ մասնակցի մասնագիտությունը համապատասխանում է գիտական թեմային մասնագիտությանը և նա բակալավրիատի 4-րդ կամ մագիստրատուրայի կամ ասպիրատուրայի 1,2-րդ տարվա ուսանող է, ապա հատկացվում է 5 միավոր: Եթե երիտասարդ մասնակցի մասնագիտությունը համապատասխանում է գիտական թեմայի մասնագիտությանը և նա ասպիրատուրայի 3-րդ տարվա ուսանող է ու ունի առնվազն մեկ գիտական աշխատանք, ապա հատկացվում է 5 միավոր, իսկ եթե գիտական աշխատանք չունի, ապա հատկացվում է 4.5 միավոր: Եթե երիտասարդ մասնակցի մասնագիտությունը գիտական թեմայի հարակից մասնագիտությանն է և առկա են վերոնշյալ պայմանները, ապա համապատասխան գնահատականներից հանվում է 0.5 միավոր: Եթե երիտասարդ մասնակցի մասնագիտությունը չի համապատասխանում գիտական թեմայի մասնագիտությանը, բայց այդ մասնագիտությունն ունեցողն անհրաժեշտ է թեմայի կատարման համար, ապա

հատկացվում է 3.5 միավոր: Եթե երիտասարդ մասնակիցն ունի գիտական աստիճան, մասնագիտությունը համապատասխանում է գիտական թեմայի մասնագիտությանը և ունի առնվազն 3 գիտական աշխատություն, ապա հատկացվում է 5 միավոր: Եթե երիտասարդ մասնակիցն չունի գիտական աստիճան, մասնագիտությունը համապատասխանում է գիտական թեմայի մասնագիտությանը, ապա հատկացվում է 3, հարակից մասնագիտության դեպքում՝ 2.5, իսկ մասնագիտությունների չհամապատասխանելու դեպքում՝ 2 միավոր: